



ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Խուճապային Մթնոլորտը Կը Ծառայէ Բացառապէս Թշնամիին

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան դարձեալ ներկայացաւ հանրութեան մանրամասնութիւններ փոխանցելու համար մօտ օրէն կայանալիք՝ Ռուսաստանի նախագահ Փութինի, Ատրպէյճանի բռնապետ Ալիեւի եւ իր մասնակցութեամբ եռակողմ հանդիպումի մասին, որու ընթացքին կը սպասուի համաձայնագիրի մը ստորագրում: «Տպաւորութիւն կայ, որ թուրք է ստորագրուելու սահմանագծման եւ սահմանագատման արդիւնքների մասին, այդպիսի բան հնարաւոր չէ, ստորագրուելիք հաւանական փաստաթուղթը լինելու է հետեւեալի մասին, որ Հայաստանը եւ Ատրպէյճանը ձեւաւորում են յանձնաժողով, որը սկսում է զբաղուել սահմանագատման եւ սահմանագծման աշխատանքներով: Այդ թղթի մէջ գրուած չի լինելու՝ սահման անցնելու է այստեղով, այնտեղով: Այս վերջին ձեւակերպումը տեղի է ունենալու այդ յանձնաժողովի աշխատանքի հիման վրայ», - ըսաւ Հայաստանի վարչապետը:

Վարչապետի այս յստակ ու պարզ խօսքերով հանդերձ, Հայաստանէն ներս եւ դուրս ծանօթ շրջանակներ կը շարունակեն ստեղծել խուճապային մթնոլորտ, որոնք կը ծառայեն բացառապէս թշնամիի շահերուն: Ամիսներէ ի վեր լրատուամիջոցներ, քաղաքական գործիչներ ու մեկնաբաններ կը խօսին գոյութիւն չունեցող փաստաթուղթերու, գոյութիւն չունեցող «միջանցքներու» եւ զիջումներու մասին հակառակ որ, անոնց կողմէ յառաջ քաշուած նախկին բոլոր կանխատեսումները ցարդ սխալ դուրս եկան եւ իշխանութիւնները մնացին հաւատարիմ իրենց խոստումներուն վրայ: Փաստը այն է որ, «Զանգեզուրի միջանցքի» հարցը բանակցային սեղանի վրայ չէ այլեւս: Գիշտ է որ, Թուրքիան եւ Ատրպէյճանը կը շարունակեն խօսիլ այդ մասին, սակայն ամէն ինչ կախել է Երեւանէն, որու դիրքորոշումը յստակ է. երթելու քայլեր համար բաց ճանապարհի Հայաստանի ինքնիշխան տարածքով, սակայն փոխադարձ սկզբունքով: Սահմանային վերջին յարձակումները, ինչպէս նախորդները չկարողացան փոփոխութեան ենթարկել Հայկական կողմի սկզբունքային կեցուածքը, իսկ պատերազմէն տկարացած դուրս եկած Հայկական բանակը կարողացաւ կասեցնել թշնամի

Ստորագրուելիք Հաւանական Փաստաթուղթը Պիտի Ըլլայ Սահմանագատման Աշխատանքներով Զբաղող Յանձնաժողով Ստեղծելու Մասին. Նիկոլ Փաշինեան

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան Նոյեմբեր 23-ին տեղի ունեցած ասուլիսի ժամանակ անդրադառնալով սահմանագատման ու սահմանագծման գործընթացին ըսաւ. «Երբ ասում ենք հայելային յետքաշում, նկատի ունենք, որ սահմանագատման եւ սահմանագծման այդ գործընթացի ընթացքում ո՞նց ենք պատկերացնում՝ պէտք է շարունակուեն հրադադարի ռեժիմի խախտումներ ու բխուժումներ լինե՞լ: Հնարաւոր է՝ Ռուսաստանը մի գաղափար առաջ քաշի, որը մեր առաջադրած խնդիրը, որ սահմանագատման, սահմանագծման գործընթացի ընթացքում պէտք է բացառել ռազմական սադրանքները»:

Ինչ կը վերաբերի տարբեր շրջանակներէն հնչող յայտարարութեան, որ եռակողմ հանդիպման ժամանակ փաստաթուղթ պիտի ստորագրուի, վարչապետը մանրամասնեց. «Տպաւորութիւն կայ, որ թուրք է ստորագրուելու սահմանագծման եւ սահմանագատման արդիւնքներ մասին, այդպիսի բան հնարաւոր չէ, ստորագրուելիք հաւանական փաստաթուղթը լինելու է հետեւեալի մասին, որ Հայաստանը եւ Ատրպէյճանը ձեւաւորում են յանձնաժողով, որը սկսում է



Վարչապետ Նիկոլ Փաշինեան Ֆեսպուքով կայացած ասուլիսի ընթացքին

զբաղուել սահմանագատման եւ սահմանագծման աշխատանքներով: Այդ թղթի մէջ գրուած չի լինելու՝ սահման անցնելու է այստեղով, այնտեղով: Այս վերջին ձեւակերպումը տեղի է ունենալու այդ յանձնաժողովի աշխատանքի հիման վրայ»:

«Հայաստանը չի դիտարկի ՀԱՊԿ-ից դուրս գալու հանգամանքը», նաեւ արձանագրելով, որ

ՀԱՊԿ-ը ոչ միայն բազմակողմ, այլ նաեւ Ռուսաստանի հետ մեր ռազմավարական յարաբերութիւններու

Տպաւորիչ Միջոցառումով Նշուեցաւ Տօթ. Արշակ Գազանճեանի «Մեր Դիտանկիւնէն» Գիրքի Շնորհանդէսը



«Մեր Դիտանկիւնէն» գիրքի շնորհանդէսի ընթացքին շնորհակալական խօսքով հանդէս Կու գայ հեղինակ՝ Տօթ. Արշակ Գազանճեան

«Մասիս» շաբաթաթերթի պատմութեան մէջ եզակի նախաձեռնութիւն մըն էր, որ տեղի ունեցաւ Հինգշաբթի, 18 Նոյեմբեր 2021ին, Փաստտիրնայի ՀԿԲՄ-ի վերանորոգուած սրահին մէջ: Նախաձեռնութեան նպատակն էր պատշաճ շնորհանդէսով մը ընթացքի հասարակութեան ներկայացնել վաստակաշատ խմբագիր՝ Տօթ. Արշակ Գազանճեանի նոր գիրքը՝ «Մեր

Դիտանկիւնէն ազգային մտորումներ ու կեցուածքներ» հատորը: Հակառակ համավարակի նախազուշական պայմաններուն՝ հոծ հասարակութիւն մը փութացած էր: Ներկայ բազմութեան մէջ կը նշմարուէին Արեւմտեան Թեմի բարեջան առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Ս.Դ.Հ.Կ.

Թուրքիան Նոր Նախապայմաններ Կը Դնէ. Միրզոյեան

«Թուրքիան նոր նախապայմաններ է դնում՝ յարաբերութիւնների հաստատման համար», ֆրանսական «Լը Ֆիկար» օրաթերթին տուած հարցազրոյցի ընթացքին յայտարարած է Հայաստանի Արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեան:

«Մենք մշտապէս յայտարարել ենք, որ պատրաստ ենք կարգաւորել մեր յարաբերութիւններն առանց նախապայմանների՝ չնայած Արցախի դէմ պատերազմի ընթացքում Թուրքիոյ կողմից Ատրպէյճանին ցուցաբերուած հակայական աջակցութեանը՝ ինչպէս քաղաքական առումով, այնպէս էլ՝ սպառնալիցութեան մատակարարմամբ եւ հազարաւոր օտարերկրեայ վարձկանների տեղակայմամբ», - անդրադառնալով հայ-թրքական յարաբերութիւններուն՝ ընդգծած է նախարարը:

«Մենք դրական ազդակներ ենք ստացել Թուրքիոյ կողմից երկխօսութիւնը վերաբացելու ուղղութեամբ, բայց այն խրթին է մնում: Անգարան նոր պայմաններ է առաջադրում: Դրանց թուում Ատրպէյճանը եւ Նախիջեւանը կապող «միջանցքն է: Դա բացարձակապէս չի կարող քննարկման առարկայ լինել: Պետութիւնները պէտք է տարանջուր թողնեն տան՝ պահպանելով սեփական տարածքի նկատմամբ ինքնիշխանութիւնը: Տարածաշրջանի հաղորդակցութեան բոլոր ուղիները պէտք է վերաբացուեն», - ակելցուցած է Միրզոյեան:

ՇԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՀՀ-Ը Ապահովել է Բախման Հանգուցալուծման Ռազմական Բաղադրիչը

ԱՐՄԵՆ ՎԱՐՂԱՆԵԱՆ

Հայաստանի ռազմավարական գործընկեր պետությունն ՌԴ-ի նախագահ Վլադիմիր Փուտինը օրերս յայտարարեց. «Հայ-ատրպէյճանական սահմանին վերջին կրակոցները ցոյց են տուել, որ իրավիճակն այս տարածաշրջանում դեռ ամբողջութեամբ չի հանդարտուել: Նման իրավիճակում մեծանում է ռուսական դիվանագիտութեան դերը յետագայ կարգաւորման համար»:

Նկատենք, որ երկրի ղեկավարը, որի հետ ունենք Հայաստանի սահմանների պաշտպանութեան եւ անվտանգութեան ոլորտում դաշնակցային յարաբերութիւններ, շեշտում է մի կողմից՝ իր դաշնակցի եւ միւս կողմից՝ սերտ յարաբերութիւնների մէջ գտնուող հարեւան պետութեան միջեւ առկայ ռազմական կոնֆլիկտը հարթելու դիվանագիտական միջամտութեան մասին: Նոյեմբերի 16-ին փորձագիտական որոշ շրջանակներից կարծիքներ հնչեցին, որ ՌԴ-ն պէտք է ռազմական միջամտութիւն ցուցաբերէր արդէն Հայաստանի բուն տարածքում ծաւալուող գործողութիւններին: ՀՀ Անվտանգութեան խորհրդի քարտուղար Արմէն Գրիգորեանն էլ Հանրային հեռուստաընկերութեան եթերում յայտարարեց. «Քանի որ Ատրպէյճանը յարձակուել է Հայաստանի տարածքի վրայ, մենք դիմում ենք Ռուսաստանի Դաշնութեանը ՀՀ եւ ՌԴ-ի

միջեւ գոյութիւն ունեցող 1997 թուականի պայմանագրի շրջանակներում Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը պաշտպանելու կոչով»:

Անկասկած, ՀՀ Անվտանգութեան խորհրդի քարտուղարի դիմումը ՌԴ-ի համապատասխան կառույցների կողմից ընդունուել է ըստ պատշաճի: Դատելով օրուայ իրադարձութիւնների յետագայ զարգացումներից՝ հայկական եւ ռուսական կողմերը 102 ռազմաբազայի միջամտութեան անհրաժեշտութիւնը չհանտեսել: Դրա պատճառն առաջին հերթին այն էր, որ ՀՀԶՈՒ ստորաբաժանումները համարժէք պատասխան տուեցին թշնամուն, եւ այդ իրավիճակում ՌԴ-ի ռազմական աջակցութեան կարիքը չկար: Միւս կողմից էլ՝ ռազմական բախումն այն ծաւալի էր, որ ՌԴ 102-րդ ռազմաբազայի զինուորը ուժերի՝ ՀՀ արեւմտեան սահմաններից արեւելեան սահման տեղափոխելու կարիք լինէր: ՌԴ-ն Հայաստանում տեղակայուած իր ռազմաբազայի հրամանատարի ոչ ռազմական միջնորդութեամբ կանգնեցրեց բախման ընդլայնումն այն դէպքում, երբ հայկական զինուորը ուժերին արդէն յաջողուել էր յետ մղել նեղ եւ դաւադիր գործելատեղի հայկական դիրքերը գրաւած ատրպէյճանցիներին: Սակայն այդ քանից յետոյ էլ փորձագիտական շրջանակներից էմոցիոնալ դատողութիւններ են հնչում, որ ՌԴ-

ն անպայման պէտք է ռազմական միջամտութիւն ցուցաբերէր: Նախկինում քոր, ինչպէս նշուեց վերեւում, բախման հանգուցալուծման ռազմական բաղադրիչը Հայաստանի բանակն ապահովել էր, իսկ միջնորդական, դիվանագիտական բաղադրիչն ապահովեց ՌԴ-ն: Միւս կողմից էլ՝ մեր հասարակութեան զգալի հատուածի համար դժուար է համակերպուել այն իրողութեան հետ, որ ՌԴ-ն, յատկապէս ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակում, բացի Հայաստանի հետ ռազմավարական յարաբերութիւններից, այլ առաջնահերթութիւններ էլ ունի: Առաջին՝ Ռուսաստանը միանշանակ չի ցանկանում յարաբերութիւնները վատացնել Ատրպէյճանի հետ, որի խոշոր սփիւռքն ապրում է իր տարածքում եւ Պաքոն համարում է ռուսական զէնքի խոշոր գնորդներից մէկը: Միւս կողմից էլ՝ Աժմպէյճանն առիթ էր բաց չի թողնում Ռուսաստանի հետ իր «բարեկամական» յարաբերութիւնների մասին բարձրաձայնելու եւ այս դէպքում տրամաբանական էր լինի ՌԴ-ի ռազմական արձագանքը, ինչքան էլ վերջինիս գործողութիւնները դուր չգալին իրեն: Բայց միաշանակ է, որ Ատրպէյճանի նման վարքագիծը կարող է հասնել մի կէտի, երբ ռուսական արջն ստիպուած արթնանայ: Միւս կողմից էլ՝ Արեւմուտքի մեծ ճնշումների եւ տնտեսական պատժամիջոցների պայ-

մաններում Ռուսաստանը փորձում է ռազմական եւ տնտեսական ոլորտում գործընկերային յարաբերութիւններ պահպանել նոյն այդ բեւեռի ռազմաքաղաքական միաւորի՝ ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի հետ: Ընդ որում՝ այդ ցանկութիւնը երկկողմ է: Հետեւաբար, ՌԴ-ի շահերի տեսանկիւնից ձեռնտու է Թուրքիայի՝ արդէն ենթակայ պետութեան՝ Ատրպէյճանի դէմ ռազմական ուժի կիրառումը, դրա համար էլ նա միայն դիվանագիտական ջանքեր է գործադրում: Բայց միւս կողմից էլ թրքական պետութիւններն են սկսել Ռուսաստանի այդ պահուածքից օգտուել՝ աւելի ու աւելի սանձարձակ գործողութիւնների դիմելով, ընդհուպ՝ ՀՀ-ի ինքնիշխան տարածքի ուղղութեամբ ոտնձգութիւնները՝ լաւ իմանալով, որ այն ՌԴ-ի ռազմաքաղաքական անվտանգութեան գոտում է: Վերջին օրերի իրադարձութիւնների համատեքստում Աժ արտաքին յարաբերութիւնների մշտական յանձնաժողովի նախագահ Էդուարդ Աղաջանեանը յայտարարեց, որ Հայաստանը ՌԴ-ին դիմել էր ՀՀ տարածքային ամբողջականութեան համատեղ պաշտպանման առաջարկով, որին ի պատասխան Մոսկուան առաջարկել է լուծման քաղաքական-դիվանագիտական ճանապարհը՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի սահմանների դէմարկացի եւ դեխիմիտացիայի իրականացումը, իսկ վերջինիս վերաբերեալ Նիկոլ Փաշինեանն իր կարծիքն արդէն արտայայտել է կառավարութեան նիստում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ուաշինգտոնի Ուշագրաւ Ակնարկը Բրիւսելեան Հանդիպման Վերաբերեալ. Շերտեր եւ Խուճեր

ՅԱԿՈԲ ԲԱՐԱՆԵԱՆ

Միացեալ Նահանգները քրտնաջան աշխատեց, որպէսզի առաջնորդները ուղիղ հանդիպեն: Յուսով եմ, որ այս հանդիպումն առաջընթաց կը լինի երկրների միջեւ նորմալ յարաբերութիւններ հաստատելու համար: Մենք ողջունում ենք այս կամքը եւ յուսով ենք, որ կողմերը կ'օգտուեն դրանից, Դեկտեմբերի 15-ի վերաբերեալ յայտարարել է Պաքոնում ԱՄՆ դեսպան Լիցենբերգերը: Ատրպէյճանում Նահանգների դեսպանի յայտարարութիւնը թոյլ է տալիս որոշակիօրէն այլ լոյսի ներքոյ դիտարկել Պրոյուսելում ԵՄ Արեւելեան գործընկերութեան վեհաժողովի շրջանակում հանդիպման-Ալիեւ հանդիպման հանգամանքը: Տեղեկութիւնը տարածուեց արձանագրումով, որ հանդիպման պայմանաւորութիւնները ձեռք է բերուել ԵՄ նախագահ Շարլ Միշելի՝ Նիկոլ Փաշինեանի եւ Իլհամ Ալիեւի հետ ունեցած հեռախոսազրոյցների արդիւնքում:

Միաժամանակ իհարկէ պարզ է, որ այդպիսի հանդիպումները մէկ օրում կամ անգամ մէկ ամսում չէ, որ կազմակերպուում են: Ահա այդ համատեքստում յատկանշական է ԱՄՆ դեսպանի յայտարարութիւնը, եթէ հաշուի առնենք այն, որ Նոյեմբերի սկզբին ռեզիդենտը այցով Երեւանում, Պաքոնում ու Վրաստանում էր այդ երկրի պետքարտուղարութեան Եւրոպայի ու Եւրասիայի հարցերի տեղակալի օգնական Էրիկա Օլսենը: Բայց, թերեւս վերստին արժէ ուշադրութիւն դարձնել եւ այն հանգամանքին, որ Փաշինեան-Ալի-

եւ հանդիպում կազմակերպելու ջանքը սկսել է թերեւս Սեպտեմբերից եւ այդ ջանքը հանրայնացուել է հենց Սեպտեմբերի վերջին, երբ Նիւ Եորքում տեղի ունեցաւ համանախագահների եւ Հայաստանի ու Ատրպէյճանի արտաքին գործերի նախարարների հանդիպումը՝ երկար ամիսների, գրեթէ մէկ տարուայ դադարից յետոյ: Իսկ մինչ այդ հանդիպումը, արցախեան հարցը քննարկել էին ՌԴ նախագահ Փութինն ու ԵՄ նախագահ Շարլ Միշելը: Նիւ Եորքում հանդիպումից յետոյ Միշելի խմբի համանախագահների հետ հանդիպում ունեցան ԱՄՆ պետքարտուղարի տեղակալն ու Անվտանգութեան խորհրդի քարտուղարի տեղակալը: Սա բաւականին ուշադրութեան արժանի հանգամանք է, այդ թւում եւ պրիւսելեան հանդիպման մասին յայտարարութեան համատեքստում:

ԱՄՆ համար գուցէ թէ որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում հարցը, թէ արդեօ՞ք կան այսպէս ասած գուզահեռ պրոցեսներ՝ ընդհանուր համանախագահութեան աշխատանքին գուզահեռ: Այդ համատեքստում էլ, արդեօ՞ք կարող է Պրիւսելի հանդիպումը լինել այդպիսի մի պրոցեսի արգասիք, եթէ հաշուի առնենք եւ այն, որ Նոյեմբերի 16-ին ռեզիդենտը իրավիճակը կտրուկ եւ անախադէպ լարուեց փարիզեան հանդիպումից յետոյ: Իսկ Փարիզի հանդիպում ասելով, թերեւս պէտք

է ուշադրութիւն դարձնել ոչ միայն համանախագահների եւ արտգործնախարարներին որ հանդիպումը, այլ նաեւ այն, ինչ եղաւ դրանից յետոյ՝ Ֆրանսայի եւ ՌԴ ԱԳՆ ու պաշտպանութեան նախարարների հանդիպումը: Ի դէպ, այս առումով էլ պակաս ուշադրութեան արժանի չէ նաեւ այն, որ Նոյեմբերի սկզբին էրիկա Օլսենի հետ Երեւան էր ժամանել նաեւ Միշելի խմբի ամերիկացի համանախագահը, որին յետոյ պէտք է միանային ռուսաստանցի եւ ֆրանսացի համանախագահները՝ ռեզիդենտը այցի համար, որ քննարկուել էր Սեպտեմբերի 25-ին Նիւ Եորքի հանդիպմանը: Սակայն, այցը տեղի չունեցաւ, պարզ է, թէ ինչո՞ւ ՌԴ եւ ֆրանսացի համանախագահները չժամանեցին ռեզիդենտը: Այդ կապակցութեամբ Նիկոլ Փաշինեանը Երեւանում հարց էր ուղղել ամերիկացի համանախագահին, թէ ինչո՞ւ չի լինում այցը, եւ բարձրաձայնեց, որ պատասխանից տպաւորութիւն ունի, որ ինդիքը Ատրպէյճանն է: Իրադարձութիւնների այդ ժամանակագրութեան եւ նշմարող շերտերի ֆոնին, Ատրպէյճանում ԱՄՆ դեսպանի յայտարարութիւնը պրիւսելեան հանդիպման վերաբերեալ արդեօ՞ք ակնարկ է այնմասին, որ առանց ԱՄՆ աշխատանքային ներդրում ունենալ որեւէ գործընթաց լինի այն տեսանկիւնի, թէ՛ ստորջրեայ գուզահեռների տրամաբանութեամբ: ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ

Հրատարակելով հայաստանեան մամուլին մեջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնորհու հոն արտայայտուող բոլոր միտքերը



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Յուզարարները Կարչապետին Պահանջած Են Բացայայտել՝ Ի՞նչ Փաստաթուղթ Կը Պատրաստուի Ստորագրել



Յուզարարներ՝ Երեւանի Հանրապետութեան հրապարակին վրայ

Քանի մը քաղաքական ուժեր Նոյեմբեր 22-ին, Երեւանի մէջ բողոքի հաւաքներ ըրին՝ պահանջելով վարչապետ Փաշինեանէն բացայայտել, թէ յառաջիկային ի՞նչ փաստաթուղթ կը պատրաստուի ստորագրել Ատրպէյճանի հետ: Բողոքի հաւաքները սկսան վաղ առաւօտեան, փողոցներ փակեցին, շատեր բերման ենթարկուեցան: Յույցերու գործուն մասնակիցներն են Կարին Տոնոյեանի գլխաւորած «5165» շարժումը, Փաստաբաններու պալատի նախկին նախագահ՝ Արա Ջոհրայեանը, նախկին իմ քայլական պատգամաւոր՝ Սոֆիա Յովսէփեանը եւ այլք: Յույցերու մասնակիցները կը կարծեն, որ սահմանազծման եւ սահմանազատման մասին փաստաթուղթը կրնայ վնասել Հայաստանի շահերը, անոնք մտավախութիւն ունին, որ այդպիսի փաստաթուղթ ստորագրելով Հայաստանը հնարաւոր է ճանչնայ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը, անոր կարգին՝ Արցախը Ատրպէյճանի կազմէն ներս:

«Կա՞յ աշխարհում մի ուրիշ նման երկիր, որ ժողովրդավարական երկրում միայն մէկն է որոշում ամբողջ ժողովրդի ճակատագիրը: Մեր Սահմանադրութեան մէջ տրուած է իրաւունք իրազեկուելու, թէ ինչ են որոշում անել մեր երկրի հետ, ձեզանից ընդամէնը դա է պահանջուում, դուրս եկէ՛ք փողոց, կանգնէ՛ք ու պահանջէ՛ք ձեր իրաւունքը՝ իրազեկուած լինել, ուրիշ ոչինչ այս պահին չենք ուզում», - յայտարարեց Կարին Տոնոյեանը:

Յուզարարները իրենց պահանջի վերաբերեալ դիմում փոխանցեցին կառավարութեան, ապա յառաջացան դէպի նախագահական նստավայր ու Ազգային ժողով: «Եկել ենք այստեղ՝ խնդրելու, դիմելու, յորդորելու Հանրապետութեան նախագահին իր ունեցած լիազօրութիւններով, իր հեղինակութեան, իր կարողութիւններով շրջանակներում գործադրել այդ ամէնը՝ ազդելու կառավարութեան, Նիկոլ Փաշինեանի վրայ, որպէսզի վերջինս բացայայտի իր սեղանին գտնուող փաստաթուղթը, որը վերաբերում է Հայաստանի Հանրապետութեան ու Ատրպէյճանի միջեւ սահմանազծման եւ սահմանազատման գործընթացին», - ըսաւ հաւաքին մասնակիցներէն մէկը:

Երեկոյեան ցուցարարները Հանրապետութեան հրապարակին վրայ հանրահաւաք կատարեցին, ապա մայրաքաղաքի փողոցներով երթի ելան: Իշխանութիւններէն ցուցարարներու պահանջին անդադարձած է ԱԺ «Քաղաքացիական պայմանագիրը խմբակցութեան պատգամաւոր՝ Արփի Դաւոյեանը՝ իր դիմատետրեան էջին գրելով. - «Հաւաքուած մարդիկ պահանջում են, ինչ-որ երեւակայական, փաստաթղթի բովանդակութեան հրապարակում՝ ընթացքում խուճապ եւ անկայունութիւն տարածելով: Սա հաւասար է նրան, որ պահանջեն հրապարակել ամբողջ կէսին ենթադրուող գալիք ձեռնարկը»:

Եթէ Կ'ըսենք, Որ Բանակի Կողքին Ենք, Պէտք Է Իսկապէս Բանակի Կողքին Ըլլանք. Անդրանիկ Քոչարեան

«Այս պահին սահմանային իրավիճակը կայուն է, բայց դա չի նշանակում, որ մենք մեր զգօնութիւնը պէտք է կորցնենք»: Այս մասին ԱԺ-ի ձեռնարկներու ժամանակ ըսաւ Քաղաքացիական Պայմանագիր խմբակցութեան պատգամաւոր՝ Անդրանիկ Քոչարեան:

«Իսկ զգօնութիւնը չկորցնել նշանակում է մեր վերաբերմունքն արտայայտենք երկրի ներսում: Մենք բոլորս պէտք է մէկտեղենք մեր ջանքերը, որպէսզի հակառակորդը որեւէ հնարաւորութիւն չունենայ իր գործողութիւններով նաեւ ներքին

լարուածութիւն առաջացնել: Իսկ դա կը բերի միայն լրացուցիչ կորուստների մեր զինուած ուժերում: Մեր խնդիրն է լինել իրականում զինուած ուժերի կողքին, ոչ թէ բաւերով, այլ գործողութիւններով: Նոյեմբերի 16-ի առաւօտեան դեռ չէին սկսուել ռազմական գործողութիւնները, բայց մեր ընդդիմադիր գործընկերները լքեցին դահլիճը եւ չվերադարձան: Մենք պէտք է լինենք ազնիւ ու անկեղծ, եթէ ասում ենք՝ լինենք բանակի կողքին, պէտք է իրականում լինենք բանակի կողքին», - ըսաւ Քոչարեան:

Սերժ Սարգսեան Սեղադրեալ Ներգրաւուած Է Կաշառքի Գործով

Վառելանիւթի գործով 2 տարի մեղադրեալի կարգավիճակ ունեցող երրորդ նախագահ՝ Սերժ Սարգսեան մեղադրեալ ներգրաւուած է եւս մէկ այլ՝ այս անգամ կաշառքի գործով: Այս գործարար Սիլվա Համբարձումեանի բողոքի հիման վրայ երեք տարի առաջ յարուցուած քրէական գործն է, որով կը մեղադրուին երկրորդ նախագահ՝ Ռոպերթ Քոչարեանն ու անոր աշխատակազմի նախկին ղեկավար, այժմ ընդդիմադիր «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր՝ Արմէն Գէորգեանը, ինչպէս նաեւ Քոչարեանի մտերիմ, գործարար՝ Սամուէլ Մայրապետեանը:

Սերժ Սարգսեանի պաշտպան՝ Ամրամ Մակինեան «Ազատութիւն» ռատիոկայանին հաղորդեց, որ խօսքը գործարար Սիլվա Համբարձումեանի բողոքի մասին է: Յեղափոխութենէն յետոյ գործարարը յայտարարած էր, որ 2008-ին հանքարդիւնաբերութեան ոլորտի մէջ գործունէութիւն ծաւալելու համար բարձրաստիճան պաշտօնեաներուն կաշառք տուած է:

Այո, հարցաքննուել է վկայի դատավարական կարգավիճակով, եւ ոչինչ չի փոխուել իրենց քրէական գործում, քանի որ իրենք այս գործը աւարտել ու ուղարկել են դատարան: Թէ հիմա ինչ քաղաքական կամ այլ նպատակադրման թիւններն ենք ելնելով որոշուեց, որ այսօր պէտք է դատավարական այսպիսի անհետեւ որոշում կայացուի, կարծում եմ՝ այդ հարցի պատասխանը շատ մօտ ապագայում պիտրին պարզ կը լինի», - ըսաւ պաշտպանը:



Նախկին Գախազահ՝ Սերժ Սարգսեան

գումարի չափազանցութիւնը կազմակերպելու համար, մեղադրանքը չ'ընդունիր: Արդէն մէկ տարիէն աւելի է, որ Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարանէն ներս այս գործով դատավարութիւն կ'ընթանայ:

Անցեալ ամիս ալ քրէական գործ յարուցուած էր Սերժ Սարգսեանի պաշտօնավարման ընթացքին Պատեն-Պատեն կատարած թուիչքներու գործով: Պաշտօնէական լիազօրութիւններու չարաշահման յօդուածով քրէական գործով Սարգսեան մեղադրեալի կարգավիճակ չունի: «Փաստերու ստուգման հարթակի» հետաքննութիւնը դրուած էր այս քրէական գործի հիմքին, ըստ որում նախագահական օդանաւը 2008-2017 թուականներու ընթացքին բարձրաստիճան պաշտօնատար անձերու կազմակերպմամբ շահագործուած եւ առանց ծառայողական անհրաժեշտութեան պետական միջոցներու հաշտն կատարած է տասնեակէն աւելի թուիչքներ դէպի գերմանական թանկարժէք հանգստավայր Պատեն-Պատեն:

Սիւնիքի Մարզին Սեջ Այլընտրանքային Ծանապարհներու Կառուցումը Պէտք Է Աւարտին Հասնի 2022 Թուականին

Սիւնիքի մարզի մէջ Գորիս - Կապան - ձախտեն ճանապարհի որոշ հատուածներու Ատրպէյճանի վերահսկողութեան տակ անցնելէն յետոյ այլընտրանքային ճանապարհներու կառուցումը Նոյեմբեր 18-ի կառավարութեան նիստին վարչապետ Նիկոլ Փաշինեան անուանեց չճշտագրուած աշխատանք, որ այժմ կ'իրագործուի եւ ըստ նախատեսուած ծրագրին պէտք է աւարտի 2022 թուականին:

«Փաստացի մենք ունենք եօթ ճանապարհ, որոնց մասին անընդհատ խօսում ենք: ճանապարհներն են մէկը Տաթեւ-Աղուանին է, որը համարում ենք աւարտուած, բաւական ժամանակ երթեւեկելի է, նորմալ է: Եւ նշենք այդ մասին, որ նախատեսուած է եռաշերտ կուպրապատում: Հիմա երկու շերտն է տեղադրուած, գարնանը, եթէ որոշ թերութիւններ լինեն, կը շտկենք, երրորդ շերտը կը տեղադրուի», - գեկուցեց Տարածքային կառավարման եւ ենթակառուցութեան նախարար՝ Գնել Սանոսեան:

«Միւս վեց հատուածներում հիմա ընթացքի մէջ աշխատանքներ կան: Այդ վեց հատուածներից մէկը Քաշունի-Բարձրաւան ճանապարհն է, որ ինն ու կէս քիլոմետր է: ճանապարհի մէկ մասը՝ 3,5-4

քիլոմետրը արդէն ամբողջովին հողային ծածկովի աշխատանքները իրականացուել են, եւ միւս հատուածներում շարունակուում են»:

Յաջորդ՝ Տանձալեր-Շուռնուխ 13 քիլոմետրոց ճանապարհը եւս կը կառուցուի, այն պէտք է անցնի անտառով, որու պատահումով աշխատանքները աւելի բարդ են:

Պատրաստ է Որտան-Կոտ ճանապարհի 10 քիլոմետրէն 5-ը, շարունակութիւնը կը կառուցուի:

«Եւ երկու ճանապարհահատուած ունենք՝ Կապան-ձախտեն եւ Կապան-Գեղանուշ - ձախտեն: Օրեր առաջ սկսուել էր Գեղանուշ - ձախտեն հատուածի շինանարութիւնը, երէկուանից սկսել ենք նաեւ խճապատման աշխատանքները, որոշակի թեքութիւններ կան: Եւ երկու-երեք օրուայ ընթացքում խճապատման աշխատանքները կ'աւարտենք, ճանապարհը աւելի հեշտ ու անցանելի կը լինի», - տեղեկացուց նախարարը:

Ըստ վարչապետի եւ Տարածքային կառավարման նախարարին, այս բոլոր ճանապարհները ամբողջովին պէտք է պատրաստ ըլլան 2022 թուականին: Թէ մասնաւորապէս ո՞ր մասուն, արդէն կախեալ է եղանակային պայմաններէն:

ԼՈՒՐԵՐ

Հայաստանը Հետաքրքրուած է Ռուսական Հարուածային Ուղղաթիռներով



Հայաստանը հետաքրքրուած է ռուսական նորագոյն Superaligator եւ Mi-28NE Night Hunter հարուածային ուղղաթիռներու ձեռքբերմամբ: Այս մասին ռուսաստանեան ԹԱՍՍ լրատուական գործակալութեան հետ գրոյցի ընթացքին ըսած է «Vertolety Rossii» ընկերութեան ղեկավար՝ Անտրէյ Պոկիրնսքին:

Անոր խօսքով՝ Նոյեմբեր 14-18-ին Արաբական Միացեալ Էմիրութիւններ տեղի ունեցած միջազգային Dubai Airshow-ին՝ Տուպայի օդազնացութեան ցուցադրութեան ժամանակ Հայաստանի, Ղազախստանի ու Արաբական Միացեալ Էմիրութիւններու ներկայացուցիչները հետաքրքրութիւն ցուցաբերած են նշուած ուղղաթիռներու ձեռքբերման ուղղութեամբ: «Rosoboronexport-ի գործընկերները աշխուժօրէն կ'աշխատին (մեր այդ ուղղութիւններուն) առաջ մղման ուղղութեամբ, եւ մենք բաւարարուած ենք անոնց ունեցած արդիւնքներով», - ընդգծած է Պոկիրնսքին:

Այս Օգոստոսին Մոսկուա կայացած Բանակ-2021 ռազմարդիւնաբերական ցուցահանդէսի ծիրէն ներս Հայաստանը սպառազին-

նութեան մատակարարման պայմանագիր կնքած էր ռուսաստանեան ընկերութիւններուն հետ եւ յայտնած էր Ռուսաստանի Ռազմարդիւնաբերական համագործակցութեան դաշնային ծառայութեան տնօրէն Տմիթրի Շուկաեւը՝ առանց մանրամասնութիւններ նշելու:

Շուկաեւի յայտարարութեան նախօրէին՝ Օգոստոս 24-ին, այդ ցուցահանդէսին մասնակցելէ եւ ռուսաստանեան ռազմարդիւնաբերական ընկերութիւններու ղեկավարներուն հետ հանդիպելէն յետոյ Հայաստանի այդ ժամանակուայ պաշտպանութեան նախարար՝ Արշակ Կարապետեան ընդգծած էր, որ Հայաստանը հրաժարած է հին սպառազինութիւն ձեռք բերելէ եւ կը ծրագրէ գնել նոր եւ որակեալ սպառազինութիւն:

2022-ին Հայաստանի պետական պիւլետէով կը նախատեսուի Պաշտպանութեան նախարարութեան յատկացնել 345.4 միլիարդը կամ այսօրուայ փոխարժէքով աւելի քան 707 միլիոն տոլար, ինչ որ 10.8 տոկոսով աւելի է ռազմական գերատեսչութեան այս տարուայ ծախսերէն:

Հայաստան Առաջին Անգամ Ըլլալով Ընտրուած է ԵՈՒՆԵՍԲՕ-ի Գործադիր Խորհուրդի Անդամ

Նոյեմբեր 17-ին Փարիզի մէջ ընթացող ԵՈՒՆԵՍԲՕ-ի Ընդհանուր համաժողովի 41-րդ նստաշրջանի ընթացքին կայացած ընտրութիւններու արդիւնքով Հայաստանը առաջին անգամ ըլլալով ընտրուեցաւ ԵՈՒՆԵՍԲՕ-ի Գործադիր Խորհուրդի (ԳԽ) անդամ՝ 2021-2025 թուականներու ժամանակաշրջանին համար:

Արտաքին Գործոց Նախարարութեան լրատուական ծառայութեան յայտնած են, որ Արեւելայեւրոպական երկիրներու տարածաշրջանային խումբին Գործադիր Խորհուրդի ընտրութիւններուն յատկացուած երեք թափուր տեղերուն համար ներկայացուած էին չորս երկիրներու՝ Հայաստանի, Լիթուանիոյ, Ուքրանիոյ եւ Ատրպէյճանի թեկնածութիւնները:

Փակ գաղտնի քուէարկութեամբ Հայաստանը, ստանալով առաւելագոյն 146 ձայն, առաջին տեղով ընտրուեցաւ Գործադիր Խորհուրդի կազմին մէջ:

Հայաստանը ԵՈՒՆԵՍԲՕ-ի

Գործադիր Խորհուրդի անդամ ընտրուած է առաջին անգամ, ԵՈՒՆԵՍԲՕ-ին 1992-ի իր անդամակցութենէն ի վեր: ԳԽ-ին իր անդամակցութեան ծիրէն ներս Հայաստանը ջանքեր պիտի գործադրէ իր յանձնառութիւններն ու առաջնահերթութիւնները իրագործելու ուղղութեամբ, մասնաւորապէս՝ աջակցելու ԵՈՒՆԵՍԲՕ-ի ծրագիրներու իրագործման, բոլորին համար որակեալ կրթութեան հասանելիութեան ապահովման ու մշակութային ժառանգութեան պաշտպանութեան ու պահպանման:

Տեղեկութիւն.- ԵՈՒՆԵՍԲՕ-ի Գործադիր Խորհուրդը բաղկացած է 58 անդամ երկիրներէն եւ իր նշանակութեամբ կազմակերպութեան երկրորդ կարեւորագոյն մարմինն է Ընդհանուր համաժողովէն յետոյ: Գործադիր Խորհուրդի նիստերը կը գումարուին տարին երկու անգամ եւ վերջինիս հիմնական գործառնութիւն է Ընդհանուր համաժողովի կողմէ ընդունուած որոշումներու պատշաճ իրագործման ապահովումը:

Վարչապետը Ընդունած է ՄԱԿ-ի Գլխաւոր Քարտուղարի Տեղակալ՝ Միկէլ Անխել Մորաֆինոսը



Վարչապետ Փաշինեանի հանդիպումը ՄԱԿ-ի Գլխաւոր քարտուղարի տեղակալ Միկէլ Անխել Մորաֆինոսի հետ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է ՄԱԿ-ի Գլխաւոր քարտուղարի տեղակալ, Քաղաքակրթութիւններու դաշինքի Բարձր ներկայացուցիչ՝ Միկէլ Անխել Մորաֆինոսը:

Վարչապետը նշած է, որ սա ՄԱԿ-ի Քաղաքակրթութիւններու դաշինքի ապսիսի բարձր մակարդակով առաջին այցելութիւնն է Հայաստանի Հանրապետութիւն եւ յոյս յայտնած, որ այս այցը կը նպաստէ երկկողմ համագործակցութեան, ինչպէս նաեւ մեր տարածաշրջանի ժողովուրդներու միջեւ երկխօսութեան:

Բարձր ներկայացուցիչ Մորաֆինոսը ներկայացուցած է Քաղաքակրթութիւններու դաշինքի գործունէութեան հիմնական ուղղութիւնները եւ կարեւորած Հայաստանի դերն ու մասնակցութիւնը դաշինքի աշխատանքներուն: Ան աւելցուցած է, որ Քաղաքակրթութիւններու դաշինքը իր մանտաթի ծիրէն ներս պատրաստ է նպաստել տարածաշրջանին մէջ հանդուրժողականութեան խթանման, միջկրօնական երկխօսութեան եւ կրօնական սրբավայրերու պաշտպանութեան:

Վարչապետ Փաշինեանը կարեւորած է տարածաշրջանին մէջ

երկխօսութեան ու հանդուրժողականութեան խթանման միտուած քայլերը, միեւնոյն ժամանակ ընդգծելով միջազգային հանրութեան կողմէ Ատրպէյճանի յարձակողական գործողութիւններուն համարժէք արձագանգի անհրաժեշտութիւնը: Կառավարութեան ղեկավարը պարոն Մորաֆինոսի ուշադրութիւնը հրաւիրած է Արցախի դէմ յարձակողականին հետեւանքով ատրպէյճանական վերահսկողութեան տակ անցած տարածքներուն մէջ հայկական պատմամշակութային եւ կրօնական ժառանգութեան ոչնչացման ու խեղաթիւրման փաստերու, անոնց կարգին՝ Շուշիի Մուրբ Ղազանչեցոց եկեղեցւոյ եւ Դադիվանքի վանական համալիրի նկատմամբ ատրպէյճանական կողմի գործողութիւններուն վրայ: Վարչապետը կարեւորած է ԵՈՒՆԵՍԲՕ-ի փաստահաւաք առաքելութեան մուտքը Լեռնային Ղարաբաղ ու յարակից շրջաններ՝ ընդգծելով այս հարցով եւս Ատրպէյճանի ապակառուցողական գործելաոճը: Նիկոլ Փաշինեան առանձնակի կարեւորած է նաեւ Արցախի մէջ ՄԱԿ-ի փախստականներու հարցերով գերագոյն յանձնակատարի գրասենեակի մարդասիրական առաքելութեան գործունէութեան անհրաժեշտութիւնը:

Ռուսաստանի Դիրքը Կարելոր է Ըսած է Ֆրանսայի Արտաքին Գործոց Նախարարը

Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը յայտարարած է, թէ Փարիզն ու Մոսկուան պետք է համագործակցին՝ հայատրպէյճանական հակամարտութեան կարգաւորման հիմնաքարերը դնելու համար:

«Շարք մը հարցերու մէջ մենք ունինք տարածաշրջաններ, բաց կան նաեւ կէտեր, որոնց ուղղութեամբ հնարաւոր է ռուսներու հետ համակարգուած աշխատիլ, կամ, առնուազն՝ կարծիքներ փոխանակել՝ առաջ շարժելու համարե, - ըսած է Ժան-Իվ Լը Տրիանը «Լը Մոնտ» պարբերականին:

Այդ հարցերու շարքին Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը առանձնացուցած է նաեւ Կովկասը, պնդելով, թէ անհրաժեշտ է համագործակցիլ: «Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ կաշուն խաղաղութեան համար հիմք դնելու ուղղութեամբ: Երկխօսութիւնը կարեւոր է, յատկապէս՝ ճգնաժամերու ժամանակ», - ըսած է Ֆրանսայի



Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Ժան-Իվ Լը Տրիան

արտաքին գործոց նախարարը: Անցեալ շաբաթ Ռուսաստանի պաշտպանութեան նախարարն ու արտաքին գործոց նախարարը մեկնած էին Փարիզ՝ ֆրանսական կողմի հետ բանակցութիւններու՝ «2+2» ձեւաչափով:

«Զինծառայողներու Ապահովագրութեան Զինճառագրամի» Ներկայացուցիչներու Զանդիպուլմը Լոս Անճելըսահայ Մամուլին Զեռ



«Զինծառայողներու Ապահովագրութեան Զինճառագրամի» ներկայացուցիչները՝ մամուլի ասուլիսի ընթացքին

Այս օրերուն Միացեալ Նահանգներու տարբեր Հայաշատ քաղաքները կ'այցելեն «Զինծառայողներու Ապահովագրութեան Հիմնադրամի» ներկայացուցիչները, ծանօթացնելու համար իրենց կատարած աշխատանքներու մասին՝ յատկապէս 44-օրեայ պատերազմի լոյսի տակ:

Լոս Անճելըս ժամանման առթիւ «Հիմնադրամի» պատասխանատուներ Տաթևիկ Երզնէան, Նարինէ Գալստեան եւ Սոնա Պաղտասարեան Լոս Անճելըսի ՀՀ հիւպատոսարանէն ներս հանդիպում ունեցան Հայկական գլխաւոր թերթերու խմբագիրներուն մասնակցութեամբ:

Ասուլիսի ընթացքին տեղեկութիւններ փոխանցեցան «Զինծառայողներու Ապահովագրութեան Հիմնադրամի» գործունէութեան եւ ծրագիրներու մասին:

«Հիմնադրամը» ստեղծուած է Հայաստանի Ազգային Ժողովի հաստատած օրէնքով՝ 2016 թուականի քառօրեայ պատերազմէն ետք, սակայն ան կը ղեկավարուի անկախ հոգաբարձական մարմինի մը կողմէ: Ըստ օրէնքի իւրաքանչիւր պաշտօնեայի աշխատավարձերէն 1000 դրամ կը փոխանցուի Հիմնադրամին: Վերջին պատերազմէն ետք այդ 1000 դրամը բարձրացած է՝ ըստ աշխատավարձի չափի:

Հիմնադրամի ներկայացուցիչները տեղեկացուցին որ, 4582 շահառուներու, որոնց 4165-ը ար-

ձանագրուած են 44-օրեայ պատերազմէն յետոյ, հատուցում տրամադրուած է շուրջ 109,000,000 Ամերիկեան տոլար: Շահառուներու 86%-ը (3948) գոհուած հերոսներ են, 2%-ը (76)՝ անյայտ բացակայողներ, 12%-ը (558)՝ առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամութիւն ունեցողներ:

Չոհուածներու ընտանիքներուն անմիջապէս կը տրուի 20 հազար տոլար, իսկ վիրաւորներուն՝ ամսական գումար՝ ըստ հաշմանդամութեան աստիճանին:

Իր հիմնադրութենէն ասդին Հիմնադրամը ստացած է շուրջ 23 միլիոն Ամերիկեան տոլար նուիրատուութիւն, որու 70%-ը ստացած է Հայաստանէն, մնացածը՝ աշխարհի աւելի քան 70 երկիրներէն: Այդ նուիրատուութիւններու մեծ մասը, բնականաբար հաւաքուած է Արցախեան վերջին պատերազմի ընթացքին եւ անկէ յետոյ: Մնացած գումարները կը գոյանան Հայաստանի եւ Արցախի բնակիչներու աշխատավարձերու պարտադիր վճարներէն:

«Զինծառայողներու Ապահովագրութեան Հիմնադրամի» ներկայացուցիչները կոչ կ'ընեն սփռուած հայութեան՝ բերելու իրենց մասնակցութիւնը այս սրբազան նպատակին՝ փոքր կամ մեծ նուիրատուութիւններով:

Աւելի մօտէն ծանօթանալու համար Հիմնադրամի գործունէութեան եւ հաշուետուութեան կարելի է այցելել 1000plus.am կայքէջը:

Խուճապային Մթնոլորտը Կը Ծառայէ

Շարունակուած էջ 1-էն

լայն մաշտապի ներթափանցումի եւ բռնի ուժով «միջանցքին» տիրանալու փորձերը:

Վերջին օրերուն, ճանապարհներ փակելու եւ ցոյցեր կազմակերպելու միջոցաւ դարձել փորձ կը կատարուի ժողովուրդը ապակողմնորոշելու եւ իշխանութիւններուն դէմ հանելու յոյսով: Բողոքի այդ շարժումները տարողութեամբ մեծ չեն, սակայն անոնց վրայ գումարած լրատուական լայն արշաւը անպայմանօրէն կ'ազդեն հասարակութեան տրամադրութեան եւ նաեւ բանակի գիւնդներուն վրայ: Խուճապ ստեղծելու եւ ժողովուրդը յուսալքութեան մատնելու գործը թշնամի փոխարէն ստանձնած են ներքին ծանօթ

ուժերը, որոնց միակ նպատակը իշխանութեան հասնիլն է թէկուզ թշնամիի շահերուն ծառայելու միջոցաւ: Այն ինչ որ անոնք չկարողացան իրագործել քուէտուփով, կը փորձեն հասնիլ երկիրը ապակայունացնելու եւ ժողովուրդը պառակտելու միջոցաւ:

Ներկայիս Հայաստան ամէն բանէ առաջ պէտք ունի ներքին միասնականութեան, իսկ մնացեալ հարցերը կախեալ են անկէ: Երկրի ղեկավարը պէտք է կարողանայ բանակցային սեղան նստիլ իր կողքին ունենալով ժողովուրդի աջակցութիւնը: Այսօրուայ դրութեամբ երկրի ղեկավարը Փաշինեանն է եւ ինքն է որ լիազօրուած է վարել արտաքին քաղաքականութիւնը եւ պարտաւոր չէ ամէն պահ հրապարակաւ հաշիւ տալու

Ստորագրուելիք Զաւանական Փաստաթուղթ

Շարունակուած էջ 1-էն

շատ կարեւոր խողովակ եւ հարթակ է:

«Որպէս նախագահող երկիր՝ պէտք է աշխատենք, որ ՀԱՊԿ-ը պատշաճ մասնակցութիւն ունենայ մեր տարածաշրջանում անվտանգութեան ապահովմանը», - ըսաւ Փաշինեան:

Միեւնոյն ժամանակ ան արձանագրեց, որ ՀԱՊԿ երկիրներէն մաս մը թուրքիոյ հետ թրջալեզու աշխարհի ռազմավարութիւն ստորագրեց, ինչ որ իրողութիւն է, որ որեւէ ազդեցութիւն չի կրնար չթողնել:

Ըստ Փաշինեանի չճշդուած տուեալներու համաձայն Նոյեմբեր 16-ին 32 հոգի գերեզմարուած է: Չճշդուած տեղեկութիւններով՝ այն 24 զինծառայողները, որոնց հետ կապը Նոյեմբեր 16-ի սահմանային լարուածութեան ժամանակ ընդհատուած էր, գերեզմարուած են. «Չճշդուած տուեալներու համաձայն՝ աւելի մեծ թիւով զինուորներ են գերեզմարուել, մի մասը, որ մենք մտածում էինք, որ գոհուած են, գերեզմարուել են: Ունենք 24 գումարած 8 գերեզմարուած, բայց էլի այս տուեալները վերջնական ճշգրտման կարիք ունեն»: «Ազատութեան» հարցին, թէ ատրպէյճանական կողմը Նոյեմբեր 9-ի յայտարարութեան անարգել երթեկութիւն արտայայտութիւնը կիրառելով՝ պնդած է, սա «ինքնիշխան միջանցք» կը նշանակէ, հայկական կողմի համար ընդունելի է առանց մաքսային կամ այլ ստուգումներու ճանապարհի տրամադրումը ատրպէյճանական կողմին, վարչապետ Փաշինեան պատասխանեց. «Կայ սովորական համընդհանուր տրամաբանութիւն՝ եթէ նշանակել ինքնիշխան միջանցք, գրուած կը լինէր ինքնիշխան միջանցք: Մանաւանդ այդ նոյն փաստաթղթի մէջ միջանցք բառը օգտագործուած է՝ Լաչինի միջանցք ձեւակերպումով»:

Ան նաեւ յայտարարեց՝ աշխատանքային մակարդակով «մենք երբեք Ատրպէյճանից միջանցք արտայայտութիւն չենք լսել»: Միեւնոյն ժամանակ, շարունակեց. «Եռակողմ աշխատանքային խմբում արձանագրուել է, որ չկայ, առաջինը ինքնիշխանութեան հարցն է: Երկրորդը՝ ինչի՞ պիտի մեզ համար ընդունելի լինի այն, ինչ որ չկայ, մենք դա ընդհանրապէս ինչի՞ պէտք է քննարկենք: Այստեղ է, որ Ատրպէյճանի շանթաբեր քաղաքականութիւնն է: Անունը դրել են «Չանգեզուրի միջանցք» ու ասում են՝ եթէ չտաք, մենք պատերազմով այդ միջանցքը կը ստանանք»:

«Չի լինելու այդպիսի բան, բայց միւս կողմից՝ Հայաստանը շահագրգիռ է, որ երկաթուղային ու ճանապարհային կապը վերականգնուի: Այո՛, Ատրպէյճանը պէտք է ստանայ ճանապարհ, տուեալ

դէպքում, Նախիջևանի մասին չէ խօսքը, խօսքը թուրքիա-Ատրպէյճան կապի մասին է, ես յոյս ունեմ՝ ճիշդ կը հասկացուեն՝ այդտեղ էլ Հայաստանը շահագրգիռութիւն ունի», - յայտարարեց Հայաստանի վարչապետը՝ աւելցնելով. «Այսօր ասում են՝ միջանցք են տալիս, Սիւնիքն են տալիս, ժողովուրդը ջան, կը ներէք, եթէ Հայաստանում տենց տուող կառավարութիւն լինէր, այդ կրակոցները չէին հնչի, ի՞նչ իմաստ կ'ունենային այդ կրակոցները, այդ յարձակողականութիւնը մեր կառավարութեան նկատմամբ չէր լինի», - ըսաւ ան՝ վստահեցնելով, որ իր ղեկավարած գործադիրը կը փորձէ ամէն կերպ Հայաստանի շահը պաշտպանել:

Հայաստանը գուցէ աւելի շահագրգիռ է, որ տարածաշրջանային հաղորդակցութիւնները բացուին, յայտարարեց Նիկոլ Փաշինեան՝ աւելցնելով, որ «միջանցքային տրամաբանութիւնը» Ատրպէյճանը կը զարգացնէ, այդ թեման (տարածաշրջանային հաղորդակցութիւնները) օրակարգէն հանելու համար:

Հայաստանի վարչապետը կը կարծէ, որ ատրպէյճանական կողմի հետ հանդիպումներէն արագ արդիւնքներու ակնկալութիւն պէտք չէ ձեւաւորել:

«Չեմ կարծում, թէ ճիշդ է ձեւաւորել ակնկալիք ամէն յստակ հանդիպումից՝ կամ բացասական, կամ դրական, ինչ-որ արագ արդիւնքների ակնկալութիւն պէտք չէ ձեւաւորել: Կայ մեր տարածաշրջանում լարուածութիւն, ու այդ լարուածութիւնը յաղթահարելու համար մենք պէտք է բանակցենք», - յայտարարեց Նիկոլ Փաշինեանը:

Ըստ վարչապետին՝ Պրիւքսէլի մէջ Դեկտեմբեր 15-ին Ատրպէյճանի նախագահի հետ հանդիպման քննարկուելիք հարցերէն մէկը հաւանաբար մարդասիրական, ներառեալ՝ գերիներու հարցը կ'ըլլայ, ան նշեց՝ ընդհանուր բովանդակային քննարկում տեղի պիտի ունենայ նաեւ:

«Մեր ընկալումն այն է, ու նաեւ ընդհանուր իրադրութիւնից է բխում, որ կարծում եմ՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի ներկայացուցիչները շփումները պէտք է լինեն աւելի յաճախ, որ մենք կարողանանք իրադրութիւնները կարգաւորել, լուծումներ գտնել եւ փորձել խուսափել ճգնաժամերից», - շեշտեց Փաշինեան:

Իսկ ինչ կը վերաբերի Հայաստանի պետական, կուսակցական, հասարակական գործիչ, գրող եւ հրապարակախօս Վանօ Սիրադեղեանի աճիւնի տեղափոխման մասին, «Կարծում եմ, որ յանձնաժողովը որոշումներ կը կայացնի, եւ Վանօ Սիրադեղեանի աճիւնը կը տեղափոխուի Հայաստան», - Դիմատետրի ուղիղ եթերով յայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինեան:

բանակցութիւններու ելեւեջներու մասին, որոնք կրնան տեսլ երկար տարիներ: Եթէ նպատակը այն է որ, իշխանութիւնները զիջումներ չկատարեն ու բանակը կարողանայ մարտունակ ուժ դառնալ ապա նախ եւ առաջ պէտք է դադարեցնել համացանցային եւ

լրատուական ահաբեկումը ու մնալ օրինաւոր ընդհիմնադրութեան սահմաններուն մէջ՝ խորհրդարանի կամարներէն ներս եւ դուրս:


Այդ կը պահանջէ երկրի շահը:

«ՄԱՍԻՍ»

Տպաւորիչ Միջոցառումով Նշուեցաւ Տօքթ. Արշակ Գազանճեանի «Մեր Դիտանկիւնէն» Գիրքի Շնորհանդէսը

Շարունակուած էջ 1-էն

Կեդրոնական վարչութեան ատենապետ Տօքթ. Համբիկ Սարաֆեան, ՌԱԿ Շրջանային վարչութեան ատենապետ Տօքթ. Ռաֆֆի



Պալեան, Արժ. Տ. Գէորգ Քհնյ. Աբճեան, Արժ. Տ. Վաչէ Քհնյ. Հայրապետեան, Հայ Աւետարանական համայնքէն՝ Վեր. Ժօ Մաթոսեան, Վեր. Սերոբ Մկրտիչեան, Վեր. Տիգրան Շանլեան, Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան գործադիր տնօրէն՝ Տէր եւ Տիկ. Զաւէն եւ Սոնա Խանճեան, ՌԱԿ Շրջանային վարչութեան ատենապետ Տօքթ. Ռաֆֆի Պալեան, ինչպէս նաեւ ՄԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի վարչիչ Մարմնի ատենապետ ընկ. Վազգէն Խոտանեան եւ քոյր կազմակերպութեանց ներկայացուցիչներ ու «Մասիս»ի բարեկամներ:

ՄԴՀԿ Մամլոյ Դիւանի եւ կազմակերպիչ մարմնի անունով ընկ. Գաբրիէլ Մոլոյեան, հակիրճ խօսքերով ներկաները ողջունելէ



ետք, բեմ հրաւիրեց «Մասիս» խմբագիրներէն եւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան ատենապետ՝ Յարութ Տէր Դաւիթեանը, որպէսզի ընթացք տայ յայտագրին: Ան որպէս հանդիսավար իր գարմանքը ու գնահատանքը յայտնեց որ «Մեր Դիտանկիւնէն» գիրքի հեղինակը ըլլալով բժիշկ ու անոր խմբագիրը ըլլալով իրաւաբան՝ նուիրական գործ մը կատարած են հրատարակելով սոյն կոթողային գործը:

«Մասիս» շաբաթաթերթի խմբագիր՝ ընկ. Գրիգոր Խոտանեան ողջոյնի խօսքով հանդէս գալով, բարձր գնահատեց Տօքթ. Արշակ Գազանճեանի տասնեակ տարիներու արդիւնաշատ գործունէութիւնը թէ որպէս խմբագիր եւ թէ որպէս գրող եւ թէ հասարակական գործիչ: Իսկ որպէս թերթի խմբագիր՝ ան իր «Մեր Անկիւնէն» խմբագրականներով կրցաւ

հարազատ թարգմանը հանդիսանալ մեր կազմակերպութեան վարած առողջ քաղաքականութեան, մասնաւորաբար՝ հայութիւնը յուզող հիմնական հարցերու առնչութեամբ:

Ողջոյնի սրտաբուխ ջերմ խօսքերով հանդէս եկան նաեւ Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան գործադիր տնօրէն Զաւէն Խանճեան եւ սփիւռքահայ բազմավաստակ գրող եւ վերջերս նուազեցան մրցանակի արժանացած գիտնական Արտոմ Փաթափութեանի հայրը՝ Սարգիս Փաթափութեան (Վահագն): Իսկ գաղութիւս ծանօթ արուեստագիտուհի, տաղանդաւոր ասմունքող Թագուհի Արզումանեան, ընտրանի հատուածներ կարդաց «Մեր Դիտանկիւնէն» հատորէն, ներկաները մօտէն հաղորդակից դարձնելով Տօքթ. Արշակ Գազանճեանի մտորումներուն:

Օրուան գիւտեր բանախօսն էր ծանօթ իրաւաբան եւ հասարա-




կական գործիչ՝ Ռուբէն Աւշարեան: Ան յատկապէս նշեց «Մեծ ուրախութիւն եւ պատիւ է ինծի համար, կանգնիլ այս ամպիրոնի ետին եւ լուսանձելուս հայ գաղութի ընտրանիին ներկայացնել նորատիպ գիրք մը, որ կը բովանդակէ բազմավաստակ, ազգային-հասարակական հրապարակագրի եւ մասնաւորաբար հաւասակչուած դեկավարի մը, յանձինս Տօքթ. Արշակ Գազանճեանի ստորագրած վերջին 100 յօդուածները, որոնք՝ երկարատե



տարիներու ընթացքին լոյս տեսած են «Մասիս» շաբաթաթերթի «Մեր Անկիւնէն» խորագրին տակ:

Ինչ կը վերաբերի վարդենիս-Մարտակերտ ճանապարհի շինարարութեան հարցով, Տօքթ Գագանճեան նկատած է որ սոյն մայրուղին յոյժ կարեւոր միջոց մըն էր Արցախը պաշտպանելու: Հետեւաբար ան շեշտած է որ հայ ժողովուրդի բոլոր կառույցներուն ճիտի պարտքն էր, միասնաբար եւ վճռորոշ շարքերով մասնակցելու այդ մայրուղիի ծրագրի իրագործման դրամահաւաքին, յանուն հայրենիքի եւ ազգային արժանապատուութեան:

Սփիւռք-Հայրենիք Գործակցութեան թեմայի տակ, Տօքթ Գագանճեան նշանաբան որդեգրած է «Մէկ Ազգ, Մէկ Եկեղեցի եւ Մէկ Հայրենիք» լոզունքն ու հասկացողութիւնը, ըլլայ անիկա կրօնական ծիրէն ներս թէ քաղաքական միջավայրին մէջ: Ան խանդավառութեամբ ողջունած է Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութեան հաստատումը, կարեւոր դրուակ մը նկատելով գայն, ազգային միասնականութեան իրագործման մէջ:

Այս հրատարակուած գիրքի մէջի բովանդակուած յօդուածներուն գրեթէ մէկ չորրորդը «Հայոց

Ցեղասպանութեան ճանաչման Ուղիով» թէմայի տակ կը գտնուի: Երեւոյթ մը որ ցոյց կու տայ թէ Տօքթ Գագանճեան որքան բծախնդրութեամբ եւ հետեւողական կերպով հետեւած է ժամանակակից իրադաճութիւններուն այս ուղղութեամբ: Իր յօդուածները ուսումնասիրելէ ետք ընթերցողը կը հետեւցնէ որ Տօքթ Գագանճեան, իր մտադրացումներն ու առարկայական վերլուծումները մամուլին յանձնելէ առաջ, անպայմանօրէն օրը օրին կը հետեւէր մամուլի մէջ լոյս տեսնող քաղական թէ ընկերային խորք ունեցող յօդուածներուն: Գագանճեան ոչ միայն Լոսանձելոսահայ մամուլը աչքէ կ'անցնէր, այլ նաեւ տարբեր-տարբեր հայրենական թէ սփիւռքեան թերթերու բովանդակութիւնները: Ան մօտէն կը հետեւէր Լիբանան լոյս տեսնող «L'Orient Le Jour» օրաթերթին, ինչպէս նաեւ Ֆրանսական «Le Figaro» եւ «Paris Match» թերթերուն: Անպակաս էին «Los Angeles Times» եւ «New York Times» ի յօդուածները իր ընթերցումներուն: Մասնաւոր կարեւոր կեդրոնացում կ'ընծայէր եւ չարտեւ կերպով կը հետեւէր թրքական եւ թրքահայ մամուլին մէջ լոյս տեսնող յօդուածներուն, որոնք անմիջականօրէն կ'առընչուէին Պոլսահայ եւ կամ սփիւռքահայ կեանքին հետ: Ի մասնաւորի, Տօքթորը, կը նկատէր որ ուրիշ թերթերու կողքին կը թղթատէր «Turkish Daily News»ը, «Հիւրիյէթ»ն ու «Թարաֆ» թերթերը:

Ան բնաւ առիթ չէ կորսնցուցած հանդիմանի հակասելու եւ հրապարակագրային ձեւով բանավիճելու թրքական թերթերու մէջ գրուած հակահայ միտքերուն հետ: «Turkish Daily News»ի մէջ մասնաւորաբար լոյս տեսած յօդուածի մը առիթով, որ թուրք տեսաբան Մեմէտ Ալի Բերանդի ստորագրութիւնը կը կրէր, Տօքթ Արշակ Գագանճեան մի քանի յօդուածներով հակասեց եւ միեւնոյն ժամանակ փորձեց լուսաբանել թուրք տեսաբանին թէ Հայոց Ցեղասպանութեան առընչուած, ճանաչման օրինագիծը Ամերիկայի Գոնկրէսի կողմէ «խայտառակութիւն» բնաւ չէ Թուրքիոյ համար, ինչպէս որ թուրք մտաւորականը կը բնութագրէր իր յօդուածին մէջ: Իսկ նոյն Ալի Բերանդին մտադրացած կարծիքին որ թուրքերը պէտք է պաշտպանեն իրենց թոռները տառապանքէ եւ ամօթէ: Տօքթ Գագանճեան վիճած է այս թունաւոր մտայնութեան դէմ առաջ դնելով մի քանի հարցադրումներ թէ արդեօք «խայտառակութիւն» է ճշմարտութեան ու արդարութեան կողքին կանգնելը, թէ դէմ գալը: Գագանճեան կը համարէ թէ խայտարակութիւն է պատմութիւնը խեղաթիւրելը եւ մանաւանդ փաստական ճշմարտութիւնները ուրանալը: Իսկ «թուրքերու թոռներու տառապանք»ը, Գագանճեան կ'աւելցնէ թէ այդ «տառապանք»ը կը մաքրուի միմիայն ու միայն երբ այդ թուրք «թոռներ»ուն հասակակից անմեղ հայ մանուկներու թափած արեան արդար հատուցումով:

Իսկ ինչ կը վերաբերի նոյն ինքն Մեմէտ Ալի Բերանդի այն հաստատումին թէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումով Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ թուրքիոյ փոխ-յարաբերութիւն-

ները կը թունաւորուին, եւ այն հարցադրումին որ «արժէ՞ ուիսկի ենթադրել երկողմ յարաբերութիւնները մի քանի հազար հայերու պատճառաւ»: Տօքթ Գագանճեան ի պատասխան, կը զգուշացնէ Բերանդին ու թուրք ղեկավարները թէ «Ամբողջական Հայը միասնական է եւ կը բռնցքանա՛յ իր հայրենիքի պաշտպանութեան ու ազգային պահանջատիրութեան սրբազան առաքելութեան ճանապարհին»: Թուրքեր կ'աւելցնէ ան. «լա՛ւ իմացէ՛ք»:

Բերանդի ու բերանդանման մտածելակերպ ունեցող թուրք տեսաբաններու դիմաց, Տօքթ Գագանճեան իր յօդուածներուն մէջ նաեւ կը մէջբերէ ուրիշ թուրք մտաւորականներու քննադատութիւնները նոյն ինքն թուրքոյ ղեկավարներուն դէմ: Արդարեւ, «Թարաֆ» թրքական թերթի մէջ տնտեսագէտ եւ ընկերային գիտութիւններու մասնագէտ Ահմետ Ալքանի ստորագրած քննադատութիւնը թուրք ղեկավարներու կրակորական կեցուցաքննի հանդէպ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցով, Տօքթորը կը գնահատէ անոր խիզախութիւնը եւ կը նախատեսէ թէ մօտ ապագային Ալքաններուն նման թուրք մտաւորականներ պիտի ծառայեն Հայոց Ցեղասպանութեան ճանաչման, դատաւարտման ու հատուցման համար:

Նոյն թեմայի տակ Տօքթորը կը գրէ, որ թեկուզ Հայկական Նիւրէնպէրկ մը տեղի չէ ունեցած, սակայն եւ այնպէս, Նիւրէնպէրկէն բարձրանալիք արդարութեան վճիռը, ան կը գտնէ, Ֆրանսայի Երեսփոխանական ժողովի եւ ապա Ֆրանսական Մերակոյտի կողմէ օրէնքի վերածուած բանաձեւին մէջ, ուր Հայկական Ցեղասպանութեան ժխտումը քրէական յանցագործութիւն կը դառնայ: Մեմէտ կը հաւատանք, կ'ըսէ Գագանճեան, որ Ֆրանսայի՝ տղամարդու այս կեցուածքին շուտով պիտի հետեւին ուրիշներ յանուն՝ արդարութեան յաղթանակին:

Հայ-թուրք փոխ-յարաբերութիւնները եւս եղած են Տօքթորին թեմաներէն մին: Ան իր յօդուածներուն մէջ բազմիցս անհազանգած է թէ պէտք է խանդավարուիլ թուրքոյ կողմէ արտայայտուած ձեւաչափ վրայ: Ան շեշտած է որ Թուրքիա, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծման մէջ յատկ կողմ մըն է, եւ անոր տնտեսական շրջափակման վերացումը Հայաստանի, պայմանաւորուած է հայկական ուժերու Արցախէն հեռացումով:

Տօքթորը տասնամեակ մը առաջ արդէն նախազգուշացուցած էր մեծ աղետի մը գոյութեան մասին եւ հարց կու տար հայրենի իշխանութիւններուն թէ մինչեւ ե՞րբ կարելի պիտի դառնալ անդուրժել թուրք ու ազգերի քմահաճ ու կեղծ խաղերուն՝ պարզապէս արտաքին աշխարհի կողմէ արտասանուած մի քանի մը գնահատական լուսանցքային խօսքերուն արժանանալու համար:

Տօքթ. Գագանճեանի մտահոգութիւններու եւ գրութիւններու մէջ անպակաս մնացած են նաեւ Միջին Արեւելեան քաղաքա-տնտեսական խնդիրները: Ան մասնաւոր կեդրոնացումի արժանացուցած է Լիբանանեան իրադարձութիւններն ու Սուրիական տագնապը, անմիջական եւ շեշտակի կերպով անհազանգի ենթադրելով սուրիահայ գաղութի տնտեսական եւ ապահովուական իրավիճակը:

Իր վերլուծումներուն մէջ, Լիբանանեան տագնապի լուծումը ան յայտնած է, թէ պէտք է գայ նոյնինքն լիբանանցիներու կողմէ: Ան տեսած է թէ ներքին թատերաբեմի վրայ երիտասարդութեամբ է որ միայն Լիբանան կը վերագտնէ իր երբեմնի խաղաղ, յառաջադէմ, բարգաւաճ կեանքը:

Սուրիահայ համայնքի մասին Տօքթորը ցաւ յայտնած է սուրիական հայրենիքի մէջ տեղի ունեցող խնդիրներուն եւ կոչ ուղղած է համայն հայութեան որ գորաշարժի ենթարկուին եւ միասնական օգնութեան ձեռք երկարեն Սուրիոյ իրենց քոյրերուն եւ եղբայրներուն:

Այս իսկ հարցով, Տօքթորը պատգամ ուղղած է հայրենի պետութեան, եւ ժողովուրդին, որ գիտակցելով իր հայրենական պետական կարելիութիւններուն, դիւանագիտական արժանիքներուն եւ համագաղային ուժականութեան, որ գորակցին Սուրիոյ մէջ խաղաղութեան հաստատման կապակցութեան եւ մասնաւորապէս, Քեսապի եւ Հալէպի հայերուն փութացնել նիւթական օժանդակութիւն:

Ինչ կը վերաբերի ազգային, կրօնա-ընկերային հարցերու մասին, Տօքթ Գագանճեանի գրիչը մնաց միշտ հոսող: Ան գրած է Սրբ. Յարութեան հրաշափառ երեւոյթի մասին նկատելով գայն որպէս անկիւնադարձային նշանակութիւն ունեցող երեւոյթ քրիստոնեայ ժողովուրդներու կեանքին մէջ: Սրբ. Յարութեան հրաշագործութեան Սրբազան պատգամն է, խրատած է ան, որ պէտք է կառուցած մնալ հայ ժողովուրդի հաւատաւոր նախնիքներէն աւանդ մնացած ազգային ժառանգութիւններուն՝ մեքրոպեան լեզուին, մշակոյթին, ազգին ու հայրենիքին:

Ան նկատած է որ հայ լեզուով ու գիրով ծնունդ կ'առնէ ազգային մշակոյթը, եւ իր մէջ կ'ամփոփէ հայ ազգի մը ամբողջական արժանիքները:

Ան համոզուած է որ Մաշտոցեան այբուբենի յօրինման հրաշագործութիւնը՝ փրկած է հայ ազգը, դէպի ձուլում տարբեր կրօններու ներթափանցումներէն:

Այս վերոյիշեալ հարուստ եւ այժմէական նիւթերու կողքին, Տօքթ Գագանճեան, որպէս խմբագիր, մասնաւոր կարեւորութիւն տուած է բնութագրելու Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան ազգային, քաղաքական եւ ազգային պահանջատիրական դիրքորոշումներուն, տուեալ ժամանակահատուածի կեանքէն ներս: «Մասիս» Շաբաթաթերթով ան շարունակած է հետեւողականօրէն ու աններող կեցուցաք որդեգրել բոլոր անոնց հանդէպ, որոնք հատուածական, եւ կամ անձնական շահերով կ'առաջնորդուէին սփիւռքեան եւ կամ հայրենական կառուցողական պայմաններու ներքեւ:

Ան բծախնդրօրէն արձագանքած է Արեւմտեան Ամերիկայի Շրջանի Հնչակեան կուսակցութեան Պատգամաւորական ժողովներուն մէջ առնուած որոշումներու մասին: Հպարտութեամբ արտայայտուած է Հնչակեան Քսաններու կեանքին ու գործունէութեան մասին: Ան իւրապատուկ նշանակութիւն գտած է անոնց մէջ եւ անոնց նահատակութիւնը, նկատած՝ ազգային գոյութեան պահպանման եւ

Շնորհակալութեան Օր Աստուծոյ Շնորհքի Ներգործութեամբ Նոյեմբեր 25, 2021

ԶԱԻԷՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Պատուաբեր Տօնը

Բացառիկ տօն մըն է այս Ամերիկայի Միացեալ Նահանգներուն յատուկ, պատուաբեր տօն մը չիրաւի, երբ աշխարհի ամենէն բազմաբաղ երկիրը օր մը կը յատկացնէ Գոհաբանելու գլխաւորաբար եւ շնորհակալութիւն յայտնելու իր բոլոր բարիքներուն համար: Պատիւ Ամերիկացի մօտաւոր անցեալի նախագահներուն իրենց բացառիկ նկատառումին համար:

Երկիրն ամբողջ կը դադրի աշխատելէ եւ կարծէք ի ծունր եկած իր բազմամիլիոն ժողովուրդով պահ մը իր հայեացքը դէպի վեր կ'առնէ ի մեծ տարբերութիւն իր առօրեայ դէպի վար արդար ու նաեւ մեղսալից սովորակներէն: Այս պիտի ըլլայ իտէսալ իմաստը տօնին եթէ մարդիկ հրաշքով մը իսկապէս վեր նային, աղօթք մը արտասանեն, եւ իրենց պարտքը համարեն գոհ ըլլալ եւ մանաւանդ շնորհակալ ըլլալ: Սուրբ Գիրքի պատուէրն է այս որ գործի կը վերածուի:

Շնորհակալ Ըլլալ

Մեր մայրենի լեզուն ճկուն է եւ միշտ իմաստալից եթէ ջինջ պահենք զայն, անոր արմատները Սուրբ Գիրքի գրաբար թարգմանութեան վրայ հիմնուած տեսնելով, ու գործածելով մեր թարգմանիչ ու Պատմիչ նախահայրերուն լեզուն որմէ ծագում առաւ մեր գիտցած աշխարհաբար հայերէնը: Մեր ուղղամիտ հայերէն լեզուն անգլերէն «Thanksgiving» բառին դիմաց թարգմանաբար «Գոհաբանութեան Օր» չըսէք, այլ «Շնորհակալութեան Օր», անոր մէջ Աստուծոյ շնորհքը տեսնելով եւ բացայայտելով:

Իսկ ի՞նչ է «շնորհք»ը, այն որ կը ճանչցուի որպէս Աստուծոյ մարդոց ընծայած լաւագոյն պարգեւն ու լծակիցը: Յիշենք միշտ երբ անձ մը «անշնորհք» կ'որակուի պարզ այն պատճառով որ Աստուծոյ ընծան ու լծակիցը չունի ի՛ր իսկ վարձունքին եւ ազատ կամքին հետեւանքով, վերջինս դարձեալ Աստուծոյ տրուած բոլորին հաւասարապէս: Շնորհքը ածական մը չէ, այլ մարդու հոգեկան ու մտային առաքինութեանց կշիռն է, արդարութիւն, ճշմարտախօսութիւն, յարգալից վերաբերմունք՝ հեռու պատեհապաշտութենէ եւ ինքնագովութենէ:

Բնականաբար «շնորհակալութիւն» բառն ալ հարկ է պարզաբանել իր բայարմատով: Հոն շնորհք բառէն գատ կայ անշուշտ նաեւ բայը որ արարքը կը գործադրէ: «Կալ» վերջնամասնիկը պարզապէս «ընդունիլ» բային անցեալ ընդունելութիւնն է քերականորէն բացատրելով: Այսինքն երբ ես շնորհակալ եմ որեւէ բանի համար, գաւաթ մը ջուրի եւ կամ որեւէ օգնութեան համար, արտայայտած կ'ըլլամ «Շնորհքի փոխանցումը» Աստուծոյ անոր որ բարիք ըրաւ ու հասաւ իմ կարիքներուն, ու ես եղայ շնորհընկալը: Յայտնապէս իմաստալից ու հոգեւոր արտայայտութիւն, շատ աւելի բարձր քան պարզ «պարտական մնալու» ըզձանքէն:

Շնորհակալութեան Օրը զոր այս բարի եւ բերկրառատ երկիրը կը տօնէ անձնական բարիքէ անդին Աստուծային Շնորհք կը թելադրէ ստեղծուած բոլոր բարիքներուն համար, արմտիք եւ բուսականութիւն, միաբան սիրով ապրիլ եւ երկիրը անարատ պահել, բոլորն ալ հայերէն լեզուով պտղաբեր կը դառնան Շնորհքի ուժով ու ներգործութեամբ: Շատ մեծ ցանկութիւն մըն է այս վերջինը չիրաւի՝ ակնկալելով երկիրը անարատ պահել մեղսալից այս կեանքին մէջ: Մարդիկ այն ատեն միայն երկիրը անարատ կը պահեն երբ իրենք ապրին անարատ կեանք, եւ ի ցոյց մարդկան միայն չտօնեն այս բացառիկ օրը որպէս սովորութիւն, զայն հանգստեան առիթի վերածելով նոյնիսկ:

Ընտանիքի Հարստութիւն

Մարդոց կեանքը փորձանքներով լեցուն է, մասնաւորաբար իրենց ձեռքով ու կամքով գոյացած: Կան անշուշտ նաեւ բնութեան փորձանքները: Առաջիններէն հեռու մնալու լաւագոյն կերպը ընտանիքի կազմութիւնն է ու անոր անխախտ ընթացքը որ լաւագոյնս կը յայտնուի Շնորհակալութեան Օրը: Ընտանիքներ անպայման կը միանան մեծով ու պզտիկով: Կը ճաշակեն գոհաբանելով գլխաւորաբար իր շնորհներուն առատ բաշխումին համար: Մեր լեզուով ընտանեկան ուրախութիւնն ու գոհունակութիւնը գիրար կը լրացնեն «շնորհք»ի շողկապով: Եթէ այս կարելի ըլլայ գործադրել այն ատեն Շնորհակալութեան Օրը միայն պատմական անցեալին չի մնար, երբ առաջին պանդուխտները Ամերիկեան ափերը հասան: Անոնց առաջին պարտքը եղաւ շնորհակալ ըլլալ առաջին իրենց ընթրիքով՝ նախնագոյն պայմաններու տակ:

Եթէ առաջին տարիներուն Անգլիայէն գաղթական ու փախստական խումբ մը մարդիկ Ամերիկեան ափերը եկան ու հաստատուեցան, այսօր Ամերիկայի բովանդակ ժողովուրդը կազմուած է բազմադիմի ազգութիւններէ եւ ժողովուրդներէ: Բոլորն ալ, հայերը ընդգրկեալ, որքան երախտապարտ պիտի մնան նոյն ազգերու ընտանեկան կեանքին որ մի քանի դարեր ետք դարձաւ աշխարհի առաջնատար երկիրը որուն «այք ամենեցուն ի նա հայէին»: Առաջին գաղթականներու գոհաբանութիւնը իսկապէս Աստուծոյ Շնորհքով օժտուած էր որ ուռճացաւ մարդոց շնորհալի եւ աշխատունակ արդիւնքներով: Ահա «Շնորհակալութեան» եւ «Գոհաբանութեան» հասարակաց յայտարարը:

Շնորհընկալ Հայեր

Հայեր անցեալ 150 եւ աւելի տարիներէ ի վեր իրենց բնօրրանէն հետզհետէ եկան զարգանալու եւ ապահով կեանք վարելու Ամերիկայի մէջ: Ունինք անոնց պարբերական գաղթի վաւերական ու մանրամասնեալ պատմութիւնը, գրուած եւ բազմիցս հրատարակուած: Հալածանքներէ եւ ցեղասպանութենէ ազատած Հայեր ապաստան գտան այս երկիրն մէջ, հրաշալի կերպով

Շար.ը էջ 15

Հայաստանի 3 Քաղաքներուն Կիրականացուեն Մշակութային Ռազմավարութեան Ստեղծման Ծրագրեր



ՊԱՊԻՆ ՍՈՒՐԱԴԵԱՆ

Երեւանի «Գիտթէ» կեդրոնում տեղի ունեցաւ Եւրոպական միութեան աջակցութեամբ կազմակերպուող «ԵՄ-ն՝ յանուն մշակույթի» (EU4Culture) ծրագրի շրջանակում համայնքային մշակութային ռազմավարութեան մշակման համար Հայաստանից ընտրուած 3 քաղաքների պաշտօնական ազդարարման եւ մրցանակների յանձնման արարողութիւնը:

րացնել մշակութային եւ ստեղծագործական կապերը: ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսեանը ողջունելով ներկաներին՝ կարեւորեց Հայաստանում «Eu4Culture» ծրագրի իրականացումը տարածքային համաչափ զարգացման շրջանակում մարզերում մշակութային կեանքի եւ մշակութաստեղծ գործունէութեան ակտիւացման, մշակութային արտադրանքը համայնքների բնակիչներին մատուցելու եւ



Միջոցառմանը ողջոյնի խօսքով հանդէս են եկել ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսեանը եւ Հայաստանում ԵՄ պատուիրակութեան ղեկավար Անդրէայ Վիկտորինը:

EU4Culture-ը քառամեայ ծրագիր է, որը ֆինանսաւորուած է Եւրոպական միութեան կողմից, աջակցում է մշակույթի ոլորտին՝ կեդրոնանալով Արեւելեան գործընկերութեան երկրների մարզային քաղաքների վրայ: Դրամաշնորհային յայտերի մրցութիւն մեկնարկել է 2021 թուականի Մայիսին եւ կը գործի մինչեւ 2024 թուականի Դեկտեմբերը: Ընտրուած երեք քաղաքները՝ Սեւանը, Չարենցաւանը եւ Իջեւանը, կը ստանան 30.000 եւրօ դրամաշնորհ՝ մշակույթի զարգացման ռազմավարութիւն մշակելու համար, այնուհետեւ կ'ընտրուի լաւագոյն ՏԻՄ (տեղական ինքնակառավարման մարմին) մշակութային ռազմավարութիւնը՝ 300.000 եւրօ գումարով տուեալ համայնքում այն իրականացնելու համար:

EU4Culture-ի նպատակն է նպաստել մշակույթի դերի՝ որպէս տարածաշրջանում աճի եւ սոցիալական զարգացման շարժիչ ուժի բարձրացմանը, օգնել մարզային քաղաքներին՝ մշակույթի միջոցով խթանելու տնտեսութիւնը, հզօ-

նրանց՝ մշակութային արտադրանքի ստեղծման մէջ ներգրաւման տեսանկիւնից՝ այդ առումով ընդգծելով ՏԻՄ դերակատարութիւնը:

Փոխնախարարը որպէս առանձնատարութիւն ընդգծեց ծրագրի մրցակցային բնույթը. «Վստահ եմ, որ առողջ մրցակցութեան պայմաններում մենք, բացի երեք քաղաքներում մշակութային ռազմավարութիւն ունենալուց, կ'ապահովենք ՏԻՄ մշակութային ռազմավարութեան օրինակ, որը կարող է նախատիպային լինել ՀՀ այլ համայնքների համար: Մշակույթի զարգացման ռազմավարութեան առկայութիւնը կը նպաստի տուեալ համայնքի ստեղծագործական կարողութիւնների լիարժէք արտայայտման եւ իրացման համար բարենպաստ միջավայրի, մշակութային կեանքին հանրային լայն մասնակցութեան ապահովմանը, մշակույթի եւ կրթութեան կապի խթանմանը, մշակույթի մոնետիզացիային, որը, ի թիւս այլ հարցերի, կը բարձրացնի տուեալ համայնքների գբօսաշրջային գրաւելութիւնը»:

Արեւելեան գործընկերութեան առնուազն 5 երկրներում ծրագրի ընդգրկուածութիւնը ճանաչողական այցերի, փորձի փոխանակման,

Շար.ը էջ 14

Արեւմտեան Թեմի Կրթութեան Օճախները՝ Շաբաթօրեայ Դպրոցները



Արեւմտեան Թեմն ունի տասնութ շաբաթօրեայ դպրոց՝ Լոս Անձելեսում եւ Գալիֆորնիայի տարբեր քաղաքներում, որտեղ հայ երիտասարդ սերունդը սովորում է մեր լեզուն, կրօնը, պատմութիւնը, մշակոյթը, երգն ու պարը, ինչպէս նաեւ մեր ազգային արժէքներն ու հայրենասիրութեան առաքինութիւնը՝ որպէսզի յարատեւ պահպանուի հայ ինքնութեանը կրակը: Այս ազգապահպան աշխատանքը նախաձեռնել է շաբաթօրեայ դպրոցների Գիտակրթական Խորհուրդը եւ ուսուցչական կազմը՝ առաջնորդութեամբ եւ հովանաւորութեամբ Արեւմտեան Թեմի բարեխնամ առաջնորդ, գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի:

Թեմական շաբաթօրեայ վարժարաններն առաջնորդում են հայոց լեզուի, հայ գրականութեան, պատմութեան, կրօնի եւ մշակոյթի համապարփակ ուսումնական ծրագրով, որը հիմնուած է Գալիֆորնիա նահանգի կողմից սահմանուած լեզուների դասաւանդութեան հիմնական չափանիշների վրայ: Ծրագրի աղբիւրներն են տեղական եւ հայրենական տպագրութեան հայերէնի ու հայ գրականութեան դասագրքերը, հայոց պատմութեան, հայ մշակոյթի, հայրենագիտութեան եւ արդիական հարցերի շուրջ առկա նիւթերը, գիտարուեստի միջոցներ, հայկական կազմակերպչական լրատեսուղական միջոցներ: Ծրագրին ընդգրկում է նաեւ աշակերտի լեզուի իմացութեան մակարդակը, տարիքային եւ հոգեբանական առանձնապատկերները եւ սովորելու կարողութիւնները:

Շաբաթօրեայ դպրոցների հիմնական նպատակն է մեր մանուկներին տալ ամբողջական հայեցի կրթութիւն, որպէսզի նրանք կարողանան՝

- հաղորդակցուել մայրենի լեզուով
- հասկանալ եւ գնահատել մեր պատմական եւ մշակութային արժէքները

- ունենալ հպարտ ազգային ինքնագիտակցութիւն
- լինել հպարտ իրենց լեզուով, հաւատով, մշակոյթով եւ հայրենիքով
- ունենալ պատասխանատուութեան գիտակցութիւն Հայ համայնքի, Եկեղեցու, ապրած երկրի եւ Հայրենիքի հանդէպ
- Ունենալ հանդուրժողականութիւն եւ յարգանք այլ ժողովուրդների եւ մշակոյթների նկատմամբ:

Մանկավարժական նոր մօտեցումներին ծանօթացնելու նպատակով, իւրաքանչիւր ուսումնական տարուայ սկզբին առաջնորդ Յովնան սրբազանի գլխաւորութեամբ դպրոցների Գիտակրթական Խորհուրդը կազմակերպում է շաբաթօրեայ վարժարանների ուսուցիչների վերապատրաստման ամենամեայ աշխատանիստեր: Վերջին՝ տասնմէկերորդ աշխատանիստը տեղի ունեցաւ այս տարի Օգոստոսի տասնչորսին մասնակցութեամբ Հայաստանի Հանրապետութեան Լեզուի Պետական Կոմիտէի տնօրէն, Բանասիրական Գիտութիւնների Դոկտ. պրոֆեսոր Դաւիթ Գիւրջինեանի եւ Սփիւռք Գիտական Կեդրոնի տնօրէն, Բանասիրական Գիտութիւնների Դոկտ. պրոֆեսոր Սուրէն Դանիէլեանի:

Շնորհակալութիւն բոլոր դպրոցների տնօրիններին եւ ուսուցչական կազմին իրենց կատարած հայակերտման մեծ աշխատանքի, բեմերից համայնքին ներկայացուած գրական-երաժշտական հանդէսների համար՝ ուր ներկայ է մեր հայրենիքը, Արցախի գինուորը, մեր աղօթքը, մեր բանաստեղծը, մեր երգն ու պարը: Շնորհակալութիւն մեր ծնողներին, որոնք սատարում են Հայ Դպրոցը՝ որպէս մի կտոր հող եւ շունչ մեր Հայրենիքից:

ՄԱՆԿ. ԳԻՏ. ԴՈԿՏ. ԷԼԼԻ Է. ԱՆԴՐԵԱՍԵԱՆ,
Արեւմտեան Թեմի Շաբաթօրեայ Դպրոցների Գիտակրթական Խորհուրդի Ատենապետ

Հայաստանի 3 Քաղաքներում

Շարունակուած էջ 13-էն

միջազգային համագործակցութեան եւ մշակութային երկխօսութեան աշխուժացման հնարաւորութիւն կը տայ:

Հայաստանում եՄ պատուիրակութեան դեսպան Անդրէաս Վիկտորինը շնորհաւորեց մասնակիցներին եւ ընդգծել, որ հենց մշակոյթն է տնտեսութեան զարգացման շարժիչ ուժը եւ պէտք է

համագործակցութիւնը ստեղծարար արդիւնաբերութեան հետ: Ա. Վիկտորինը յաջողութիւն մաղթեց ընտրուած քաղաքներին. «Դուք պէտք է որոշէք, թէ ինչ տեսլականով էք ուզում զարգացնել ձեր մշակոյթը: Այս ծրագիրը կը խթանի ամբողջ երկրի մշակութային ուժանակութեան զարգացումը»:

«ԵՄ-ն՝ յանուն մշակոյթի» ծրագրի ընդհանուր համակարգող

Թարգմանչաց Տօնը Սահակ Մեսրոպ Հայ Քրիստոնեայ Վարժարանէն Ներս



ՍՈՆԱ ՊՍՏԱԼԵԱՆ

Չորեքշաբթի Նոյեմբեր 8, 2021-ի առաւօտուն եռուզեր մը կը տիրէր Սահակ Մեսրոպ վարժարանի շրջափակին մէջ, միեւնոյն ժամանակ յարգելով համաճարակի պայմանները սահմանափակ թիւով ծնողներ կը փութային ականատես եւ ականջալուր ըլլալու իրենց զաւակաց թարգմանչաց յայտագրի ելոյթներուն:

Աչքառու էր բեմին զարդարանքը, ուր կանգնած էր Սուրբ Մեսրոպ Մաշտոց շրջապատուած ալքուրենով եւ եռագոյն դրօշով:

Բացման խօսքով հանդէս եկաւ դպրոցի Տնօրէնուհի Տիկ. Մարալ Պոյաճեան, որ փառք տալով ողջունեց ներկաները, ուր առիթ ընծայուեցաւ այս օրը միասին հրճուելու եւ մեր աշակերտներուն աշխատանքը թափանցելու մեր հօգիներուն մէջ:

Առաջին առիթով վայելեցինք Նախամանկապարտէզի եւ Մանկապարտէզի փոքրիկներուն ղողզողուն շրթներով արտասանուած աշնանային եւ հայրենասիրական երգերն ու արտասանութիւնները, որոնք ուրախութիւն պատճառեցին իրենց ծնողներուն:

Ապա փոքր դադարէ ետք կարգն էր Ա. Բ. եւ Գ. դասարաններուն, որոնք կատարեցին պատկերաւոր ներկայացումներ զգեստաւորուած փառաբանելով Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Կաթողիկոսի եւ Վռամշապուհ թագաւորի համագործակցութիւնը, հայ ազգի գոյատեւման Ի խնդիր:

Աշակերտները յիշեցին վերջի շեշտներուն կատարած դերը, վեր առնելով հայ լեզուի կարեւորութիւնը միեւնոյն ժամանակ պանծացնելով մեր թարգմանիչները:

Ակներեւ էր իւրաքանչիւրին ինքնավստահ եւ խորիստ ելոյթները յատկանշական գլխարկներով: Բաւարարուած կը զգայինք նաեւ ունկնդրելով խմբային ոգեւորիչ արտասանութիւններն ու խմբերգները որոնք կը հրապուրէին ներկաները:

Յայտագրի երրորդ մասը կ'ընդգրկէր 4րդ 6րդ եւ 8րդ դասարաններու ելոյթները հրամցելով խմբային արտասանութիւններ

եւ խմբերգներ եւ 8րդ դասարանը ներկայացուց փոքր թատրոն մը գուարճացնելով իրինց ծնողները:

Խրախուսիչ էր եւ մանաւանդ շնորհաւորելի մեր սիրասուն աշակերտները, որոնք հպարտօրէն իբրեւ տիպար հայեր կատարեցին իրենց դերերը քաջ գիտնալով Ս. Մեսրոպի առաքելութիւնը եւ հայ դարբնոցին կարեւորութիւնը:

Յատկանշական եւ յիշատակելի էր Տնօրէնուհիին շնորհաւորական

խօսքերը ակնարկելով հայ ուսուցիչներուն անսակարկ նուիրումով աշխատանքը պահելով հայ մշակոյթը:

Տնօրէնուհին՝ անակնկալօրէն բեմ հրաւիրեց Տիկ. Սոնա Պատալեանը, որ 20 տարիներ ծառայած էր Սահակ Մեսրոպ վարժարանին ներս: Ան բեմ հրաւիրեց նաեւ Հոգաբարձական կազմի ներկայացուցիչները եւ գնահատեց եւ պարգեւատրեց Տիկ. Պատալեանը, որ մեծ սիրով եւ եռանդով աշխատած էր ջանք չի խնայելով նոր սերունդին փոխանցելու հայ լեզուն եւ մշակոյթը: Պարգեւատուն ալ իր կարգին զգացուած շնորհակալութիւն յայտնեց, որ հեզասահ եւ ուրախ օրեր ունեցած է Սահակ Մեսրոպ վարժարանին մէջ միեւնոյն ժամանակ գոհունակ ըլլալով այս պատմական օրէն:

Սահակ Մեսրոպի աշակերտները իրենց յարգանքի տուրքը մատուցեցին, հայերէն լեզուով արտայայտուելով եւ խոստանալով որ միշտ պիտի յիշեն մեր մշակոյթը եւ ինքնութիւնը, ըլլալով տիպար հայրերից չմոռնալով հայ լեզուի կարեւորութիւնը մեր դպրոցէն ներս, քաջ հաւատալով, որ լեզուն է, որ մեզ կանգուն պիտի պահէ այս օտար ափերուն մէջ:

Ծնողներ գոհունակ սրտով բաւարարուած եւ ըմբոշխնած այս ձեռարկը, վերադարձան իրենց տունները իրենց զաւակները վստահելով Սահակ Մեսրոպ վարժարանին դաստիարակութեան եւ ուսումնական մակարդակին, ապագայի լաւ երագներով եւ բաղձանքներով:

Յայտագրի աւարտին դպրոցի ծնողական յանձնախումբը հիւրասիրեց հայկական «մանթը» ճաշով:


Անատոլի Բալֆերթը, ծրագրային կոնսորցիումում Հայաստանի մասով աշխատանքները համակարգող, երեւանում «Գեթթէ» կեդրոնի ղեկավար Նաթիա Միքելաճե-Բախտոյանին, Հայաստանում ծրագրի ազգային համակարգող Մարինէ Կարոյեանը եւս իրենց խօսքում կարեւորեցին ծրագիրը՝ ներկայացնելով դրա ընդհանուր նկարա-

գիրը, ընտրութեան գործընթացն ու յետագայ քայլերը:

Ընտրուած քաղաքների ներկայացուցիչները նշեցին իրենց ոգեւորուածութեան մասին եւ վստահեցրին, որ համագործակցաբար, մշակութային ծրագրերի միջոցով զգալի արդիւնքի կը հասնեն տնտեսական զարգացման խթանման գործում:

Իրանի Ֆուտպոլային Մարզաշխարհի Նախկին Փայլուն Աստղերից Կոստանդ Դալիթեանի Ցաւալի Մահը

Երկուշաբթի, Նոյեմբերի 15ին, ծանր հիւանդութիւնից յետոյ կեանքից հեռացաւ Իրանի ֆուտպոլային մարզաշխարհի նախկին աստղերից, լաջն ժողովրդակա-նութիւն վայելող, Թեհրանի ֆուտպոլային խումբի մնայուն անդամ Կոստանդ (Կոստիկ) Դալիթեանեանը խորը սուզի մատնելով իր մերձակայ հարազատներին, ընկերներին եւ իրեն ճանաչողներին:



Ծնունդ էր 1942 թուին Իրանի Ղազուին քաղաքում: Նա սերում է Իրանում յայտնի Դալիթեանեան ընտանիքից, որն մեծ դեր ունեցաւ Իրանի պետական եւ գինուորական շրջանակներում: Հանգուցեալի հայրը Հայկ Դալիթեանեանը կրթական վաստակաւոր մշակ էր Ղազուինում եւ Թեհրանում դասաւանդելով անգլերէն լեզուն պետական դպրոցներում: Կոստիկը երիտասարդ տարիքից նուիրուելով ֆուտպոլին անդամակցեց Թեհրանի առաջնակարգ ֆուտպոլային «Դարաի» խմբին եւ դարձաւ խումբի աստղերից եւ մրցման համար միացած խմբին մեկնեց արտասահմանեան մի շարք երկիրներ, որոնց թւում Հայաստան, Վրաստան եւ Ատրպէյճան: Տարիներ յետոյ Թեհրանի «Արարատ» ֆուտպոլի խումբը շատ աշխատանք տարաւ Կոստիկին միացնելու իրենց, որպէս ղեկավար: Սակայն կարեւոր մրցումների ընթացքում ոտքի ոսկորը ջարդուցեց եւ նա ստիպուած երկու տարի դամուսն մնաց անկողնում: Այդպիսով ֆուտպոլի խաղը վերջ գտաւ նրա համար, բայց նա միշտ ներկայ էր կարեւոր խաղերին եւ իր ցուցմունքներով օգտակար էր ֆուտպոլիստներին: Բարեյիշատակ Կոստիկի մահը սգում են իր ընտանիքը, երեք քոյրերը, ընկերները եւ Իրանի նախկին ֆուտպոլիստները եւ ֆուտպոլասէրները:

Վշտակից՝ Ն.

Իրաւաբան Ռուբէն Աֆշարեանի Ելոյթը

Շարունակուած էջ 12-էն

ազատ ու անկախ հայրենիք կերտելու սրբազան պատգամ:

Իսկ Սարգարապատի, Ղարաքիլիսէի եւ Բաշ Ապարանի յաղթանակները, Տօքթորը դիտել տուած է որ անոնք կերտուած են շնորհիւ հայ ժողովուրդի միասնական ոգին:

Իր գրութիւններուն մէջ, ան բացատրած է որ հայազգի առաջին յաղթանակին՝ Սարգարապատին, յաջորդած է Հայաստանի Առաջին Հանրապետութեան ստեղծումով, երկրորդ յաղթանակը: Շատ շուտով, ան աւելցուցած է, որ «Արեւելքի հորիզոնին վրայ» փայլատակած է հայազգի՝ ընկերվարական Հայաստանով ձեռք բերուած երրորդ յաղթանակը, որ Հայաստան աշխարհին բերած է, ըստ Տօքթորին, «կրանիտեայ պաշտպանութիւն, անխորտակ պետական կառույց, հարուստ մշակույթ եւ խորթափանց գիտութիւն»: Այս յաղթանակներուն «գերագոյն»ը, գրած է Գազանճեան, եղած է մերօրեայ Ազատ, Անկախ եւ Գերիշխան Հայաստանի գոյառումը:

Այս բոլոր նիւթերու կողքին, Տօքթորը մասնաւոր սիւնակներ յատկացուցած է նաեւ, իր խորագրաց շնորհակալութիւնները յայտնելու «Մասիս» Շաբաթթերթի անմիջական իր գործընկերներուն, սկսեալ գրաշարէն մինչեւ սրբագրիչը, յիշելով խմբագրական կազմի անդամներն ու տնօրէնութիւնը: Մասնաւորը գնահատանքի եւ երախտագիտութեան խօսքերով ան յիշած է իր շուրջ հաւաքած բազմաթիւ յօդուածագիրներուն: Մասնաւորը շնորհակալական խօսք ուղղած է թերթին բաժանորդներուն ընդհանրապէս, նիւթական եւ բարոյական նեցուկ կանքնող բոլոր այն ազգանուէր անձնաւորութիւններուն որոնք սատար հանդիսացած են «Մասիս»ի հրատարակման: Տօքթորը իր գնահատանքի խօսքերուն մէջ, իւրապատու տեղ տուած է նաեւ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Արեւմտեան Շրջանի Վարիչ Մարմնոյ որ կը հովանաւորէ թերթը: Այս բոլորը ըրած է, գրած է Տօքթ. Արշակ Գազանճեան, հաւասարակշռուած ձեւով, հեռու զգացական մղումներէ: Իր միտքն ու ուղղեղը գերիշխած են իր զգացումներուն վրայ, եւ առ այդ ան կարողացած է մնալ արաւկայական, չափաւորական եւ հաւասարակշռուած իր գրութիւններուն մէջ, միշտ վեր առնելով ազնիւն ու բարին: Սակայն, Տօքթորը ունէր իր զգացական կողմն ալ, որ մերթընդ մերթ ընթերցողը կարող էր նկատի առնել, մասնաւորաբար երբ ան կը գրէր այս երկնագունդէն առ

յաւետ հերացող իր մտերիմներուն մասին:

Ան բնաւ չի մոռցաւ անդրադառնալու իրմէ բաժնուած գրչեղբայրներուն թէ գաղափարակից ընկերներուն ունեցած ազգին նկատմամբ ցուցաբերած գոհողութիւններուն եւ ներդրումներուն մասին:

Ան նկարագրեց Տօքթ. Յարութիւն Սաղբեանը որպէս շնորհագարդ ու ուշագրաւ հասարակական գործիչ մը, որ ապրած կեանքին ընթացքին նուիրումով եւ աշխուժութեամբ նպաստած է այս գաղութի հասարակական կեանքի առաւել եւս զարգացման: Տօքթ. Սաղբեանը մնայուն ներկայութիւն մը եղած է «Մասիս»էն ներս, կը գրէ Գազանճեան, իր քաղաքական, ազգային, ընկերային, եկեղեցական եւ պահանջատիրական բնոյթի յօդուածներով:

Բարեհամբույր գործակից եւ թանկագին գրչեղբայր կ'անուանէ, Փրոֆ. Գէորգ Խրլոպեանին, որ եղած է, ըստ Տօքթորին, փնտուած եւ տաղանդաշատ գրող մը, մտածող մը, խորթափանց ընկերբան մը, եւ պատմաբան փրլիսոփայ մը:

Անտեսանելի ընկերական կապ մը կարծէք գոյութիւն ունէր Տօքթորին եւ Պէպօ Սիմոնեանի միջեւ: Անոնք իրենց երիտասարդ հասակէն մաս կազմած են գեղարուեստական գործերու խմբակին, եղած են ղեկավար ընկերներ որ Լիբանանեան քաղաքացիական պատերազմի ընթացքին միասնաբար ձեռնարկած են հանգանակային այցելութիւններու շարքի մը՝ Միջին Արեւելք, Եւրոպա, Գանատա եւ Միացեալ Նահանգներ, կարենալ նիւթապէս օգնելու համար Սահակեան Լեւոն Մկրտիչեան դպրոցին:

Տօքթորը սրտնեղութեամբ կ'արտայայտուի երբ կը գրէ. «Չարաղէտ Մահը Յափշտակեց Բանաստեղծին Սիրտը»: Պէպօ Սիմոնեանի մահով, եւ Պէպօ Սիմոնեանի մահագրութեամբ, Տօքթ. Արշակ Գազանճեան իր վերջին յօդուածը ստորագրեց «Մասիս» Շաբաթթերթի Ապրիլ 4, 2015 թուին մէջ: Ինչպէս որ այս գիրքի նախաբանին մէջ յիշած են, որպէս վերջաբան այս երեկոյեան ելոյթիս, հպարտութեամբ կը կրկնեմ.

«Մեր Դիտանկիւնէն - Ազգային Մտորումներ Ու Կեցուածքներ» խորագրով այս հատորի նպատակը, գաղափարակից ընկերջ մը, յանդուգն եւ հաւասարակշռուած ղեկավարի մը եւ չափաւորական խմբագրի մը նուիրական ծառայութիւնը, մեր ապագայ սերունդներուն սեփականութիւնը դարձնել է:

Պատիւ արժանաւորաց՝ Տօքթ Արշակ Գազանճեան Շնորհակալութիւն

Շնորհակալութեան Օր

Շարունակուած էջ 13-էն

Վերակենդանացան առաջատար դիրքերու հասնելով: Ահա վերջերս Նոպեան բարձրագոյն մրցանակին տիրացաւ երիտասարդ Տօքթ. Արտեմ Փաթափութեան, առաջինն ըլլալով ամերիկահայութեան մէջ որպէս գիտնական բժիշկ: Ուրիշներ եւս փայլեցան որոնք բոլորը միասին շնորհակալ եղան ընդմիշտ մեր այս երկրին ընծայած պատեհութիւններուն ու գնահատանքին

համար: Օրհնեալ ըլլան առաջին պանդուխտները որոնց հետեւեցան բազում գաղթականներ ու չմոռցան շնորհակալ ըլլալ այս երկրին որուն Աստուած իր շնորհաբեր հովանին տարածեց ընդմիշտ: Յատկապէս շնորհընկալ եղաւ հայ ազգը պանծացնելով Ամերիկեան բարերար հովանաւորութիւնը: Երջանիկ Շնորհակալութեան Օր, Նախ այս մեծ երկրին, եւ ապա մերագն հայութեան:»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Name: -----

Address: -----


City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email:-----

ՄԵՆՔ ԿԱՊԱՀՈՎԱԳՐԵՆՔ ՁԵՐ ԱՊԱԳԱՆ, ՈՐՊԵՍՁԻ ԴՈՒՔ ԿԵՆՏՐՈՆԱՆԱՔ ՆԵՐԿԱԻ ՎՐԱ



RESIDENT INSURANCE PRODUCER
Accident and Health Agent,
Casualty Broker-Agent, Life-Only Agent, Property Broker-Agent

209 E. Alameda Ave., Suite 204
Burbank, CA 91502

**WE INSURE YOUR FUTURE,
SO YOU CAN FOCUS ON THE PRESENT**



KARAPET S. DEMIRCHYAN CA LICENSE: 0C74479
demkarsinc@sbcglobal.net (818) 913-2414

Արտիոմ Դալաքեանը Նոկաուտով Պաշտպանեց Աշխարհի Ախոյեանի Տիտղոսը



Ուքրանիայի բռնցքամարտիկ Արտիոմ Դալաքեանը (21-0, 15 նոկաուտ) պաշտպանեց թեթևագույն քաշային կարգի WBA վարկածով ախոյեանական տիտղոսը. 12 ուսուցիչ մենամարտի ընթացքին ան նոքաուտով յաղթեց փանամացի Լուիս Քոնսեպսյոնին (39-9, 28 նոկաուտ):

Մարտը կայացավ Քիեվի մէջ, Դալաքեանի նկատելի առաւելութեամբ ամբողջ դիմակայութեան ընթացքին: 5-րդ ուսուցիչի Դալաքեանը երկու անգամ նոկդաուտներ ենթարկեց իր մրցակցին, իսկ 9-դին հերթական նոկաուտներն յետոյ փանամացիին անկիւնը նետոյ սրբիչը եւ մրցավարը թեքնիքկան նոկաուտով յաղթական յայտարարեց Դալաքեանին: Արտեմի համար այս մենամարտը դարձաւ տիտղոսի հինգերորդ պաշտպանութիւնը:

Ուքրանիոյ Հայերու Միութեան նախագահ Վիլեն Շատուրեանը WBA վարկածով աշխարհի ախոյեան Արտիոմ Դալաքեանին պարգևատրած է «Սփիւռքի Ակտիւ գԳործիչ» շքանշանով:

«Ռոման» Յաղթեց, Մխիթարեանը Կատարեց Կոլայի Փոխանցում



Իտալիոյ ֆուտպոլի առաջնութեան 13-րդ հազրուանին «Ռոման» հիւրընկալուեցաւ «Ջենոայի» կողմէ, որու գլխավոր մարզիչի պաշտօնին նորամուտը նշեց Ուքրանիոյ հաւաքականի նախկին գլխավոր մարզիչ Անտրէյ Շեւչենկոն:

«Ռոման» առաւելութեան հասաւ 2:0 աղիւնքով: Փորթուկալացի Ժոզէ Մուրիլիոյի գլխավորած խումբի առաջին կողմը 82-րդ վայրկեանին նշանակեց Կանայի 18-ամեայ յարձակող Ֆելիքս Աֆենա-Գեանը, որը 75-րդ վայրկեանին փոխարինած էր ուզպէք յարձակող էլտոր Շոմուրոզովին: Կոլային փոխանցումը կատարեց Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը, որ խաղցաւ ամբողջ խաղի ընթացքին: Աւելացուած վերջին վայրկեանին Ֆելիքս Աֆենա-Գեանը նաեւ երկրորդ կողմը նշանակեց:

«Ռոման» 22 կէտով կը գրաւէ աղիւսակի 5-րդ տեղը : «Ջենոան» 18-րդն է՝ 9 կէտով:

«Ինթերը» Ուժեղ Էր «Նափոլիէն», Որ Կրեց Առաջին Պարտութիւնը

Իտալիոյ առաջնութեան 13-րդ անգրուանին ախոյեան «Ինթերը» Միլանի մէջ մրցեցաւ առաջատար «Նափոլիի» հետ: Հիւրերը կրեցին իրենց առաջին պարտութիւնը այս տրեշրջանին:

Իտալացի Սիմոնէ Ինձագիի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 3:2 արդիւնքով:

«Նապոլիին» 32 կէտով կը շարունակէ գլխավորել աղիւսակը: Նոյնքան կէտ ունի երկրորդ տեղի վրայ ընթացող «Միլանը»: «Ինթերը» 28 կէտով երրորդն է:

«Մանչեսթեր Սիթի», «Չելսի» եւ «Լիվերպոլ» Յաղթական

Անգլիոյ առաջնութեան 12-րդ հանգրուանին ախոյեան «Մանչեսթեր Սիթին» ընդունեց Լիվերպոլի «էվերթոնին»: Կատալոնացի խոսեպ Գուարաիոյի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 3:0 արդիւնքով:

«Չելսին» հիւրընկալուեցաւ «Լեսթեր Սիթիի» կողմէ: Գերմանացի Թոմաս Տուխելի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 3:0 հաշուով:

«Լիվերպոլ» սեփական դաշտին վրայ խաղցաւ Լոնտոնի «Արսենալի» հետ: Գերմանացի Եուրգեն Կլոպի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 4:0 արդիւնքով:

«Չելսին» 29 կէտով կը գլխավորէ աղիւսակը եւ 3 կէտ առաջ է երկրորդ տեղի վրայ գնուող՝ ախոյեան «Մանչեսթեր Սիթիէն», որ :

«Լիվերպոլ» 25 կէտով կը գտնուի 3-րդ դիրքի վրայ:



Միսսայի եւ Մեսիի Կոլերը Յաղթանակ Ապահովեցին ՊՍԺ-ին



Ֆրանսայի առաջնութեան 14-րդ հանգրուանին ՊՍԺ-ն ընդունեց «Նանտին» եւ յաղթանակի հասաւ 3:1 արդիւնքով:

Խաղի երկրորդ վայրկեանին աչքի ինկաւ փարիզեան խումբի ֆրանսացի յարձակող Կիլիան Միսսայէն:

65-րդ կարմիր քարտ ստացաւ դաշտի տէրերու քոսթառիքացի դարպասապահ Կելլոր Նաւասը: Պրագիլցի յարձակող Նեյմարի փոխարին խաղադաշտ դուրս եկաւ սպանացի դարպասապահ Սերխիո Ռիկոն:

76-րդ վայրկեանին հիւրերէն հաւասարութիւնը վերականգնեց ֆրանսացի յարձակող Ռանդալ Կոլո Մուանին:

ՊՍԺ առաջ անցաւ 81-րդ վայրկեանին հիւրերու ֆրանսացի պաշտպան Տենիս Ապիսի ինքնակոլի շնորհիւ: Արժենթինացի յարձակող Լիոնել Մեսիին 87-րդ վայրկեանին նշանակեց իր առաջին կոլը Ֆրանսայի ֆութպոլի առաջնութեան այս տարեշջանին:

ՊՍԺ 37 կէտով կը գլխավորէ աղիւսակը եւ 13 կէտ առաջ է երկրորդ դիրքի վրայ ընթացող «Լանսէն»:

«Պարսելոնայի» Նոր Մարզիչը՝ Զաւին Սկաւ Յաղթանակով

Պարսելոնայի եւ Սպանիոյ հաւաքականի նշանաւոր ֆուտպոլիստ Զաւին մարզչական ասպարեզ մուտք գործեց յաղթանակով:

Սպանիոյ առաջնութեան 14-րդ հանգրուանին տեղի ունեցաւ գաթալոնական երկու խումբերու՝ «Պարսելոնայի» եւ «Էսպանյոլի» աւանդական հանդիպումը:

«Կամպ Նոու» մարզադաշտին վրայ տեղի ունեցած խաղին նուազագոյն արդիւնքով առաւելութեան հասաւ «Պարսելոնան» 48-րդ վայրկեանին հոլանտացի յարձակող Մեմֆիս Տեպայի արդիւնաւէտ կատարած 11 մեթրանոց կոլի շնորհիւ:

«Պարսելոնան» 20 կէտով բարձրացաւ 6-րդ տեղ, «Էսպանյոլը» 11-րդն է՝ 17 կէտ:



Զեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին Massis2@earthlink.net (626) 797-7680